ԽՕՀՍ. ԽՕՀՍՏԵՍՆ

ԹԹԹԱՂԱՅԻՆ

Հայրիկ, Պարոնիսաց, Պրը-Պուրի, Գոռ-Մխիթար, Դանիել, Լաճնցիկ, Եզովպոս, Ժողովուրդ, Մալա Նասր-էդ-դին, Արիլով, Բալակիրև եւ ուրիշ ազգային ու օտար գրաւոր խօսքեր։

182

ԸՆՏԻՐ գրաւոր խօսքեր

Հիմնադրեալ է

Թիֆլիզ

Տպարան ՀԻՊՈԼԻՏ, Գանձակայ։ Ա. 3.

1908

ԽԱՉԱՏ. ԽԱՉԱՏՐԵԱՆ

8-36
Ծ
1961 թ.

ԾԻԾԱՂԱՖԵՐ

Հայրիկ, Պարոնեան, Պրլը-Պուլի, Դոս-Մխիթար, Դանտէ, Լաֆոնթէն, Եզոպոս, Ռոմպիանոս, Մոլլա Նասր-էդ-դին, Նրիլով, Բալակիրեւ եւ ուրիշ ազգային ու օտար զուարճախօսներ:

15.2.02
Ա 6208

182

ԸՆՏԻՐ *զուարճախօսութիւն*

Ամենդօսներ

ՀԱՅԿ ՍՈՒՐԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Թիֆլիզ
Տպարան «ԷՊՕԽՆ», Դանովսկայեա № 3.
1908

ԱՌԱՋԻՆ ԽՕՍՔ

Հայ ազգի պատմութիւնն ուսումնասիրած անձն անշուշտ դիտած կլինի, որ հայ ժողովուրդը շարունակ ենթակայ է եղել հալածանքների, տառապանքների, ծով զրկանքների և լկանքների. պատճառն՝ անընդհատ պատերազմներն են եղել, որոնք յուզել, վրդովել և դժոխք են դարձրել հայի կեանքը. պատերազմ արտաքին թշնամիների դէմ. պատերազմ ներքին թշնամիների դէմ։

Խաղաղ, ապահով կեանք, հանգիստ նիստ ու կաց հային կարծես չի շնորհած. հայն իբրև կուլտուրասէր ազգ, բուռն ձգտումն է ունեցել ամեն մի հասարակական գործում յառաջադիմել և իր հետ էլ տանել հարևան ազգերին, սակայն յաճախակի խափանարիթ պարագաները յետ են խասեցրել հային յառաջխա-

ղացման միտումից և ենթարկել նորանոր հալածանքի, ասատանդական կեանքի և վարժեցրել նրան գաղթելուն, խոյս տալ հայրենի երկրից և թափառել օտար կլիմաների տակ։

Հարկաւ՝ այդ տեսակ դժոխային կեանք ստեղծուելուն իր պատճառներն ունին.—հայի բնակավայրը, բնիկ և եկեւոր տարրերի յարաբերութիւնները, դրացի ազգերը, կրօնական վէճերը, ժամանակաշրջանն և ուրիշ շատ պատճառները։

Առիթ ունեցել ես, ընթերցող, հետաքրքրուիլ այդ դառնութեան բաժակն ըմպած հային, որոնք շատ-շատ են. նա անշուշտ իր հոգու ամբողջ թափով փրփրաբերան մի կարճ, շատ կարճ բացականչութիւն բաց կթողնէ. — «Հայ—վայ». բաւականացիր դրանով, էլ մի քրքրիր նրա հոգու վէրքերը. եթէ իսկ նրա արեւնակից եղբայրն ես, այդ մի «վայ»-ով թափանցիր նրա հոգու խորքը, սպեղանիր դէր վրան և բուժիր։

Եւ որ ազգին չի զարմացրել հայի շինարար ձեռքը, նա հարիւր հազար ան-

գամ իր բունը շէնացրել, իսկ անգութ ձեռն աւերել. նորից հայն ուղղել—կարգաւորել, կրկին անողորմ ձեռն տակն ու վրայ արել. այսպէս անվերջ՝ մինչև նոյն իսկ մեր քսաներորդ լուսաւոր համարուող դարումն էլ շարունակում է աւերել այդ կախարդիչ ձեռն։

Ի հաստատութիւն ասածներիս. բաւական է մտաբերենք մենք ականատեսներս Տաճկական-Հայաստանի 1894—95 և Կովկասի 1904—05 դառնաղէտ, սրախողխող իրականութիւնը։

Ինչ և իցէ։ Ցուսահատութիւնը թուլասիրտների բաժինն է։ Նման օրինակ շատ չար ու բարի է անցել հայի գլխովը։ Հայը՝ նման դարբնոցում դարբնուող երկաթի, բրտի ձեռնով կերտուած և բրտարանում թրծուած անօթի, շատ հնոցների և բովերի միջով անցած դուրս եկած՝ դարձել է դիմացկուն, ամրակուռ։

Այժմ՝ սիրական իմ ազգ, քո այդ ծով դառնութիւններին, յոգնատանջ հոգուդ և մարմնիդ ձօնում եմ «ԾԻԾԱՂԱԲԵՐ» գիրքս, թող սա մի առ ժամանակ

փարատէ, ցրէ, հեռացնէ սրտամաշ մտածութիւններդ, տրտմութիւններդ և հոգեկան մելամաղձութիւններդ ու տեղի տայ ուրախ-ղուարթ տրամադրութեան։

Խաչատուր Խաչատրեան

ԾԻԾԱՂԻ ՕԳՈՒՏԸ

Ուրախ ծիծաղը կեանքի մէջ իր դերն ունի։ Բժշկական տեսակէտից դիտուած է, որ ծիծաղի ժամանակ շնչառութիւն-ները-շնչում խոր է լինում, արտաշնչում երկարատև և թարմ օդով նորոգում է թոքային բշտիկներն ու արեան շրջանառութիւնն արագանում է և այս բոլորը բարերար ազդեցութիւն է անում թէ ֆիզիքական և թէ հոգեկան դրութեան վրայ, հետևաբար և առողջութեան վրայ։

Սրտագին ծիծաղը փարատելով մարդուս մելամաղձութիւնը բուժում է հիւանդ զգացումները։

Կեանքի մէջ լինում են վայրկեաններ, րոպէներ, ժամեր, երբ մի լաւ զուարճախօսութիւն, որ առաջացնում է հոգեբուղխ ծիծաղ, մի տեսակ օրհնաբեր պարզև և մեծ օգնութիւն է լսողի համար։

Ահաւասիկ իմաստուն մարդկանց խօսքերը ծիծաղի մասին.—

«Ուրախ ծիծաղը դեղի պէս օգտակար է։

Զար մարդիկ երգ չունին։

Որտեղ երաժշտութիւն, այնտեղ և ամենայն բարիք։

Ծիծաղը բարի սրտի և բարի խղճի նշան է։

Ինքնաբուղխ և երջանիկ ծիծաղը միշտ կայտնէ բարութիւն։

Երկրի վրայ չկայ աւելի գեղեցիկ քան մանկական զուարթ ծիծաղը։

Ծիծաղը մանկական սրտի պարզութեան և անմեղութեան յորդ աղբիւրն է»։

Ծիծաղի բարերար օգուտները հասկացել են դեռ հին ժամանակներում կայսրները, թագաւորները, սուլթանները, շահերը, նախարարները, մելիքները, իշխանները, բէգերն և խաները, որոնք պահում էին զուարճախօսներ, սրախօսներ, միմոսներ և ճնշկատակներ, որոնց զուարճախօսութիւնների շնորհիւ ոչ միայն թեթեւանում էին նրանց օրուայ մէջ կրած դա-

տավարական ծանրութիւններից, այլ և շատ անգամ փոխում էին հաստատուած վճիռներն և կախաղանից ու աքսորավայրերից ազատում յանցաւորներին։

Հայոց թագաւորներն և ստորադրեալ իշխանաւորներն էլ ունեցել են իրանց զուարճախօսները. յիշենք միայն Արցախ նահանգի Վարանդա գաւառի Աւետարանոց գիւղի Բ. Մէլիք-Շահնազարի զուարճախօս Պողոսին, որի անունը Մէլիք-Շահնազարը փոխել է «Պըլը-Պուղի», այսինքն՝ խենթ Պողոս։ Խենթը դարաբաղցոց լեզուով Պէլը, Պըլը. իսկ Պողոսը՝ Պուղի։

Պըլը-Պուղու զուարճախօսութիւնները բղխելով զուտ հայկական հոգուց՝ ներկայացնում են իսկ հայկական կեանքը, բնաւորութիւնները, յարաբերութիւնները, սովորութիւնները, նիստ ու կացը։

Պըլը-Պուղին ոչ միայն եղել է զուարճախօս, այլ և խորհրդատու, սերտ բարեկամ հարազատ մէլիքներին և քաջերին. եղել է նա անկաշառ դատաւոր և սուրհանդակ։ Մասնակցել է նա հարա-

զատ մէլիքների և հայ քաջերի խմբերին Ղարաբաղի կռիւների ժամանակ։

Պըլը-Պուղին ծնուել է մօտաւորապէս 1734—35 թ. Աւետարանոցում։ Նա ամուսնանում է և ունենում զաւակներ, հարսներ։ Պըլը-Պուղին մեռել է 1815 թ., մեծ պատուով և հանդիսով թաղուում է Շօշ աւանի և Արկաթալ շէնի սահմանում եղած քարայրում՝ նրա խնդրանքի համաձայն և քարայրը կոչւում է Պըլը-Պուղու անունով։

Յաչ. Յաչատրեան

ԾԻԾԱՂԱՒԵՐ

1

Քաղաքացին ասում է փողոցում կանգնած անգործ գիւղացուն.

—Բարեկամ, արի էս մէշոկով բուտիլկէքը մեր տուն տար, քեզ էնպէս լաւ-լաւ բաներ սովորեցնեմ, որ էլ խեղճ չես ապրի։

—Շատ լաւ, ասում է գիւղացին և շալակելով պարկը՝ քաղաքացու հետ կողք-կողքի տուած գնում են։

Ճանապարհին քաղաքացին ասում է.

—Բարեկամ, եթէ կասեն գարեհացը գաթայից լաւ է, չհաւատաս. եթէ կասեն խաշուն խորոված ից լաւ է, չհաւատաս. եթէ կասեն մի լաւ պանիրն արդար իւղից լաւ է, էլի չհաւատաս։

Այսպէս գնալով, երբ քաղաքացու տան սանդուղների վերևն էր հասել գիւղացին՝ յանկարծ բաց է թողնում պարկն՝ ասելով.

—Աղա, թէ որ ասեն մէկը սաղ մընաց, չհաւատաս։

2

Վարանդա գաւառի Սուետարանոց գիւղի Բ. Մէլիք-Շահնազարը սաստիկ բարկանալով՝ 15 մեղաւոր մարդկանց քիթը կտրել է տալիս. սրանց մէջն էր և մի ձիթավաճառ, որի կինը գալով Մէլիքի զուարճախօս Պըլը-Պուղու (խենթ Պօղոս) մօտ՝ լալով ասում է.

—Ա՛յ Պուղի, քեզ մատաղ, ուզում եմ մարդուս քիթը տանեմ, չեմ ճանաչում, էս քթերի միջից մի գտնես տաս։

— Ա՛յ գիժ, դու որ 20 տարի մարդուդ հետ գիշեր-ցերեկ ապրել ես ու նրա քիթը չես ճանաչում, ես որ տարէնը մէկ անգամ էի տեսնում, ինչ ճանաչեմ։ Քթերը վերցրու, մէկ մէկ հոտ քաշիր, որից ձիթահոտ գայ, էն էլ քո մարդու քիթը կլինի։

3

Մի մարդ երկու կին ունէր. մէկը

պառաւ, միւսը Ջահիլ։ Երկուսն էլ աշխատում էին իրանց տղամարդին դուր գան և նրա տարիքը յարմարեցնեն իրանց տարիքին. ուստի պառաւը փնտռում էր մարդի սնլ մազերը, որ իր նման ծերը երևայ. իսկ Ջահիլը՝ սպիտակ մազերը, որ Ջահիլ երևայ։ Մի ամիս մարդը կարծելով թէ այդ ամենը սիրոյ նշան է, թոյլ էր տալիս երկու կնոջ էլ իրանց սրտի ուզածը կատարեն։—Եւ կարճ ժամանակից յետոյ մարդը բոլորովին քաչալանում է։

4

Ողջ, վեր կացէք, մեր տանը հրդեհ է։

—Ոչինչ, տունն ապահովագրած է։

—Վեր կացէք, թէ չէ կայրուէք։

—Ոչինչ. կնանչս էլ է ապահովագրած։

5

Մոլլա Նասր-էդ-դինն երկար ժամանակ իր մի պարտքը չէր կարողանում վճարել, որից ազատուելու համար՝ նա սուտ մեռած էձևանում, և կնոջն ու երեխաներին ուղարկում է պարտատիրոջ մօտ խնդրելու, որ մուրհակը պատռի, որպէս զի ինքը միւս կեանքում չտանջուի պարտքի պատճառով։

Գինն երեխաներին առած՝ լալով գընում է պարտատիրոջ մօտ, յայտնում ամուսնու մահն և աղաչում, որ պարտքը բաշխէ։

Պարտատէրն իսկոյն գալիս է մոլլի տունը, տեսնում է որ մոլլան պատանուած, տանն էլ ոչինչ չկայ։ Էլ ստանալիքից յոյսը կտրած, մուրհակը պատռում է։ Բայց որքան մեծ է լինում նրա զարմանքը, երբ մուրհակը պատռելուց յետոյ մոլլան պատանքով ցցում է պարտատիրոջ առաջը։

6

Մի մարդ էր 500 ռուբլի պարտքից ազատուելու համար՝ դիմում է փաստաբանին։ Սա էլ յայտնում է, որ 100 ռուբլի վարձատրութեամբ կազատի նրան պարտքից։

Համաձայնում են և փաստաբանը պարտապանին սովորեցնում է. — դատաւորի առաջին հարցմանը կպատասխանես՝ է՞, ի՞նչ անենք, թէ էլի հարցումն տայ, կասես՝ ըան չունի՞ս։

Հետևելով փաստաբանի խորհրդին՝ պարտապանը գործի օրը համարձակ կանգնում է դատաւորի առաջը.

16

Հայրիկ ձի հեծնելու լաւ համբաւ ունէր։ Շուշում ուզում են Հայրիկի հունարը փորձել։ Ամարասի վանքը գնալու ժամանակ, բերում են ամբողջ քաղաքին յայտնի Ամբրումենց մեծ, բարձր, կրակոտ, ամեհի ձին։ Հայրիկը հեծնելով ձին, ճարտարօրէն վարում է. ամենքը տեսնում են թէ ինչպէս ձին մրցում է Հայրիկի հետ։ Յաջող վերադարձին՝ իջնում է ձիուց և նկատում է շուշեցոց.— Ես այս ձին հեծայ, բայց ձեր ըրածը բան մը չէր։

17

Սկսնակ սափրիչն ածիլողին հարցնում է.

—Քանի՞ եղբայր էք։

—Եթէ այստեղից ողջ առողջ ազատուիմ, չորս եղբայր ենք, պատասխանում է ածիլողը։

18

Հիւանդ ամուսինը կնոջն առաջարկում է.

—Սօնա, երբ ես մեռնեմ, տես, իմ ընկեր Կարապետին առ, նա լաւ երիտասարդ է։

— Հանգիստ եղիր, սիրելի, ես էլ այդպէս եմ մտածել դեռ քո առողջ ժամանակը...

19

— Պուղի, հայրս մեռել է, — ասում է մէլիքը, — սգաւոր եմ, եթէ էգուց աչքիս չերևաս, քեզ 5 ղուալ կորեկ կտամ։

— Մէլիք, շատ բարի, էգուց ձեր տուն չեմ գայ։

Միւս օրն երբ մեծ հանդիսով մէլիքի հօր թաղման կարգն էին կատարում, մէկ էլ տեսնես Պուղին ղուալները 5 շան մէջքին գցած, մէկի վզից էլ զանգը կախած՝ զնգզնգացնելով գալիս կանգնում մէլիքի առաջը։ Քահանաներն և ժողովուրդը, այս տեսնելով, ծիծաղից թուլանում, երգեցողութիւնը խանգարւում և մէլիքը բարկանում է Պուղու վրայ.

— Այ տղայ, ես քեզ չասացի՞, որ էսօր աչքիս չերևաս։

— Լաւ, մէլիք, մէկ որ ես ձեր տուն չեմ եկել, ու մէկ էլ որ իմ հէրն ու մէրը քեզ մատաղ, չարանալ մի՛, երեխաներս սոված կոտորւում են, եկել եմ կորեկը տանեմ. դէ՛, մի մարդ ուղարկի գայ, չափի ինձ տայ, լուս դառնայ քո հօր հոգին։

20

Մոսկուայում մի թուրք կամենում է պարսից հիւպատոսին ներկայանալ, որն ապրում էր Сухарева башня-ի մօտ։

Զայն է տալիս կառապանին.

— Աղա՛, փայթու՛ն, ա փայթու՛ն, ինչես փոյժի՞մ, քանսուլ փոյժի՞մ...

—Пожалуйте баринъ. куда прикажите?—մօտ քշելով՝ հարցնում է կառապանը։

—Ինչես փոյժի՞մ, քանսուլ փոյժի՞մ. Զուխար բաշի զոթի փոթի քիր չեթվեր թաք *)։

—Говорите яснѣе, я васъ не понимаю.

—Փնա՛ա, դուռեաք, չարանում է թուրքը—փա՛րուսքի դա նի զնայի՞թ։

21

Կոմս հայ Լորիս-Մելիքեանը կայսերական պալատում իր ազդեցութեան-ներգործական դերի գագաթնակէտին էր հասել։ Սա մի նշանաւոր հայից շարունակ դիմումներ էր ստանում, որ թշուառ

*) Իբր թէ՝ այստեղ կառքդ նստեմ, հիւպատոսի մօտ իջնեմ, մինչև Սուխարևա բաշնեայի մօտ գնալ գալը 25 կոպէկ։

հայ ազգի ապագայ վիճակի մասին մտածէ, մի դարման անէ։

Կոմսը պատասխանում է.— Ռուսաստանը մի հսկայ մեքենայ է, ես աշխատում եմ այդ մեքենայի մեծ ա՛իւը պտտացնել մեծ անիւը շարժելուց յետոյ, մանրերն արդէն իրանք իրանց կպտտուին։

22

Հիւրանոցում ճաշի ժամանակ մի ուսանող երկար ժամանակ խօսում էր իր գիտութեան մասին։

Լսողներից մէկը ձանձրանալով ասում է։

—Բաւական է վերջապէս որքան լսեցինք ձեր գիտութեան մասին, այժմ էլ պատմեցէք ինչ չգիտէք դուք։

—Շատ բարի, շատ բարի, երկու խօսքով կարող եմ այդ ասել.— չգիտեմ թէ ինչպէս վճարեմ ճաշի փողը։

23

— Է՛յ, պարոն, ձեր անցաթուղթը կեղծ է, ասում է ոստիկանն օտարականին։

—Ընդհակառակն, արդարանումէ նա, —անցաթուղթս իսկական է, ես եմ կեղծ։

24

Մի անգամ մոլլա Նասր-էդ-դինը փլաւ եփելու համար հարևանից մի մեծ կաթսայ է խնդրում։ Միւս օրը մոլլան վերադարձնում է՝ հետն էլ մի փոքրիկ կաթսայ.

—Է՛ս ի՞նչ կաթսայ է, հարցնում է հարևանը։

—Քո կաթսայի շուտն է, նա երէկ երեկոյ մեր տանը ծնեց։

Հարևանը մտքում ծիծաղելով մոլլի վրայ՝ վերցնում է երկու կաթսան էլ։

Մի քանի օրից մոլլան նորից խընդրում է մեծ կաթսան։ Հարևանն ուրախութեամբ տալիս է, յուսալով, որ այս անգամ էլ կծնի։ Սակայն անցնում է մի քանի օր, իսկ մոլլան կաթսան չի վերադարձնում։

—Մոլլա, ի՞նչ եղաւ կաթսան։

—Մեռաւ, գլուխդ ողջ լինի։

—Ինչպէս թէ մեռաւ, կաթսան էլ կմեռնի՞։

—Թէ որ ծնի, կմեռնի էլ, պատասխանում է մոլլան,—ինչի՞ ծնելուն հաւատացիր, մեռնելուն չես հաւատում։

25

Մի խուլ գիւղացու այծերը կորչում են. նա գնում է որոնելու։

Երկար որոնելուց յետոյ՝ պատահում մի վար անողի, որը նոյնպէս խուզ էր. սկսում է հարց ու փորձ անել զանազան ձևերով ու շարժուձևերով,

—Բարի աջողում, աղբէրացու, ասում է իծաւէրը, էծեր չէս տեսել արածելիս։

Աստծու բարին, պատասխանում է վար անողը, շնորհակալ եմ Աստուած որդիքդ պահի։

—Եօթն էր, չէ՞, մէկի պոզն էլ կոտրած։

—Ի՞նչ անեմ, գլխի շարժումով ասում է վար անողը,—եղներս շատ են բեզարել, էսօր (ձեռն պարզելով) էսքանից աւել չկարացի վարեմ։

—Շատ ժամանակ է՞, ինչ՞ տեսել ես արածելիս։

—Էդ կողքի տափն էլ երէկուայ վարածս է։

—Բա չգիտես, որ կողմի վրայ գնացին։

—Ո՞րն ես ասում, հոնի ծառի կըշտի տափը, որ առաջին օրուայ վարածս է. էգուց էլ (ձեռն մեկնելով) էէէն հեռու տափն որ երևում է է..., էն եմ վարելու։

—Հա՜... դէնը գնացին հա՜. շատ

շնորհակալ եմ, աղբէրացու. թէ որ քու ասած տեղումը գտնեմ էծերս, խօսք եմ տալիս, որ պոզատ էծը քեզ փէշքաշ կանեմ, ասում է իծատէրն ու գնում։

Բաղդի բերմամբ այծերը հէնց այն կողմն էին, որ կողմը մատնացոյց է անում վար անողը։ Իծատէրն ուրախացած՝ առաջն է անում, բերում. երբ մօտենում է վար անողին, պոզատի ականջիցը բռնում ու ճղղացնելով մօտ տանում.

—Ես իմ խօսքին տէր մարդ եմ. ա՛ռ աղբէրացու, հալալ ըլի քեզ մօրդ կաթի պէս։

—Է՜յ, ընչեր ես ասում, պատասխանում է վար անողը վախեցած, ես ընչի՞ պէտք է դրա պոզը կոտրեմ։

—Վա՛յ, սրան մտիկ տուէք. ընչի՞, քանի որ ես պոզը կոտրածն եմ խոստացել։

—Հաւատա որ ես չեմ կոտրել։

—Ի՞նչ անեմ, էդ եմ խոստացել, ա՛ռ։

—Տօ՛, մարդ Աստուծոյ, բարկանում է վար անողը,—ասում եմ որ ես չեմ կոտրել։

—Հազար էլ ասես, պոզատն եմ խոստացել, եթէ չես հաւատում, արի գնանք տանուտէրին գանգատ, թող նա

վճիռ տայ. արի, դէ, էլի, ինչի՞ ես կանգնել։

Բարեբաղդաբար այս անգամ իրար հասկանում են։

Մեր խուլ գանգատաւորները պոզատն առած՝ գնում են տանուտիրոջ մօտ հէնց այն միջոցին, երբ նա իր կնոջ հետ կռուել ու սաստիկ բարկացած, կրակ կտրած՝ տանից դուրս էր գալիս։

Ծատէրն երկար ու բարակ իրն էր ասում, վար անողն իրանը, իսկ տանուտէրը, որ ամբողջովին զբաղուած էր իր կնոջ հետ ունեցած վէճովը՝ տաքացած բացականչում է.

—Ինչո՞ր էք ասում, ինչ, էդ էծը չէ, որ օխտն էծ էլ ուրիշ բերէք, դեռ հլա էլի չեմ բարբշել իմ կնկայ հետ։

Դու մի՛ ասիլ՝ նրանց քոռ բաղդիցը՝ տանուտէրն էլ խուլ է եղել,

26

Սուրբ Սարգսի շաբթին մի քահանայ աղջիկ է մկրտում։

Աղջկայ հայրը հարցնում է.

—Տէրտէր, աղջկանս անունն ինչ ես դրել։

—Սարգիս եմ դրել, Արզումանի։

– Տէրտէր, քո՞ տունն Աստուած շինի, ախր Սարգիս անուն աղջիկ կլինի։

—Արդուման, դեռ՞ առաջին երեխադ է, դու խամ ես հլա. ս. Սարգսի պատին ծնածի անունը Սարգիս կդնեն, կուզի աղջիկ լինի, կուզի տղայ։

27

—Պուղի, պատկիդ հրամանը ստացել ես։

—Մէլիք, առաջ պորտ-պորտ արին և ասացին՝ չհաս է։ Զորիս կաշառք վերցրին յետոյ ասացին.—

«Մարալ Զորի,
Ոսկի մատանի
Ակն եամանի,
Հեռու ազգականի,
Հրաման տուր, տանի»։ – Եօթ պորտ անց է, հաս է, հրամանը գրեցէք։

—Այ տղայ, դու խենթ էիր, որ իմ թանկագին Զորին տարար մի հրամանաթղթի տուիր։

—Մէլիք ապրած կենայ, Զորին կգայ։

Պուղին պատկուելուց յետոյ՝ գնում Զորին բերում, մէլիքին յանձնում, ասելով այս խօսքերը.—

«Մարալ Զորի,
Լուսադ բարի,

Հարսանիքս արի
Անցաւ մի տարի»։

28

Մարդու մէկը մի էշ առնում, բանեցնում է 4 տարի։ Մի օր քաղաք գնալիս, նստում է ծառի 'շուքում, քնում, էշն էլ ծառից կապում։ Երբ զարթնում է, տեսնում իշի տեղ մի երիտասարդ կապուած։ Հարցնում է.—այ էշ, ինչպէս եղաւ, որ մարդ դարձար։

— Ես մի քահանայի որդի եմ, սաստիկ նեղացրի հօրս, նա էլ 'անիծեց՝ որ 5 տարի էշ դառնամ. երբ դու քնեցիր լրացաւ իմ 5 տարին, կրկին մարդ դարձայ։

— Ազատում եմ քեզ, գնա ներողութիւն խնդրիր հօրից և հնազանդ կաց։

29

Աշակերտները մի օր վարժապետին հարցնում են.

—Վարժապետ, «Որոգայթ» ինչ ասել է։

—Վրվթալ,—պատասխանում է վարժապետը։

Աշակերտները յետոյ բառարանն են նայում, ասում են,—վարժապետ, մեն-

բառարանին մտիկ արինք—ողոգայթը—թալաք ասել է։

—Ա՛յ տղայ, դէ թալաքն ընկնողը, ոսքը որ կոտրի, կվրվթայ էլի, ասում է վարժապետը,—ապա Աստուած ձեզ մի կտոր շնորք էլ ա չի՞ տուել, էդ հասարակ բանը հասկանալու։

30

Բիսմարկը տանջւում էր ջղային հիւանդութիւնից. կանչում է մի անուանի բժիշկ-պրակտիկ և չափից դուրս զարմանում է, երբ վերջինս նախապէս սկսում է մի առ մի պատմել նրան հիւանդութեան ծագումը։

Ո՞րքան ուրեմն մարդիկ պէտք է սպանած լինէք դուք այս նրբութիւնը ձեռք բերելու համար, հարցնում է նրան Երկաթէ Կանցլէրը։

—Աւելի քիչ, քան թէ դուք, ձերդ պայծառափայլութիւն,—այս հիւանդութիւնը ստանալու համար։

31

—Պատկերահանդէս գնացի՞ր։

—Գնացի։

—Տեսա՞ր իմ նկարները։

—Վա՜հ ի հարկէ, բացի քո նկարնե

րից այնտեղ ուրիշ ոչ մի նկար չէր երևում։

—Դէ յաւ, կատակ մի՛ անիր։

—Ամենևին ոչ։ Միւս նկարներն անկարելի էր տեսնել, որովհետև ահագին բազմութիւն էր խռնուում նրանց առաջ։

32

—Ի՞նչ տպաւորութիւն արաւ ձերդ մեծապատուութեան վրայ նորեկ վարդապետի քարոզը։

—Այնպէս նուրբ կերպով բացատրեց նա ողորմութիւն տալու նշանակութիւնը, որ այժմ ես ինքս էլ պատրաստ եմ ողորմութիւն խնդրելու։

33

Մոլլա Նասր-էդ-դինը ներկաների խանութ էր բաց արել։ Մի օր գալիս է մէկն և ասում.—մոլլա, առ այս կտորն և ներկիր այնպիսի գոյնով, որ լինի ոչ սև, ոչ կանանչ, ոչ կապոյտ, ոչ դեղին, ոչ մոխրագոյն, մի խօսքով ոչ մի յայտնի գոյն։

—Շատ լաւ, պատասխանում է մոլլան։

—Իսկ ե՞րբ գամ տանելու։

—Երբ այնպիսի օր, որ լինի ոչ եր-

կուշաբթի, ոչ երեքշաբթի, ոչ չորեքշաբթի, ոչ հինգշաբթի, մի խօսքով շաբաթուայ ոչ մի օրը։

34

Մի ճամբորդ գիշեր ժամանակ պանդոկի դուռը ծեծում է։

Այդ ո՞վ է, հարցնում է պանդոկապետը լուսամտի ներսից։

—Ներսէան եմ, Գէորգի եղբայրը, Պօղոսի փեսան, պզտի գիւղի աթոռակալի թոռն, վերին թաղի խանի տէրը, Պետրոսի եղբօրորդին, Մանուկի քաւորը, Գալատի...

—Ներողութիւն, այդքան մարդու համար պարկելու տեղ չունիմ,—ասում է պանդոկապետն և լուսամուտը փակում։

35

Գողը մութ գիշերին աղքատի լուսամտով ներս է մտնում. աղքատը թէև պառկած էր անկողնում, բայց քնած չէր։

—Բարեկամ, սխալւում ես դու, ասում է նրան աղքատը, դու գիշերով այնտեսակ մի տեղ ես եկել մի բան փախցնելու, ուր ես ցերեկով ոչինչ չեմ գտնում։

36

—Պատիւս եմ պահանջում, պարոն, պատիւս։

—Եղբայր, ինձ իսկի բան պահ ես տուել, որ պահանջում ես, ես քո պատիւն իսկի էլ տեսել չեմ։

37

Երեխայ ժամանակ Պըլը Պուղուն եկեղեցի են տանում և «Հրաժարիմք» միջոցին ստիպում են նրան երեսը դէպի արևմուտք դարձնէ։

—Ես Աստծուց խռով չեմ, իսկ ով Աստծուց խռով է, պատասխանում է Պուղին,—թող նա երեսը շուռ տայ։

38

Մէկը լուացքի տաշտ է առնում։ Ճանապարհին մտածելով, որ մի օր այդ տաշտը պիտի կոտրուի ու շինել պիտի տայ, ինքը կոտրում է, տանում դարբնի մօտ շինել տալիս և ապա բերում տուն։

39

—Գէորգ, ինչպէս ես։

—Շատ լաւ եմ, շնորհակալ եմ, Գրիգոր։

—Բայց իմ անունս Գրիգոր չէ։

—Այո՛, իմ անունս էլ Գէորգ չէ։

40

—Մի կինտօլ բանտից պիտի բաց թողնէին, քահանան նրան խրատում էր.

—Որդեակ, ահա դու այսօրուանից ազատուում ես. խելօք կաց, այնպէս արա, որ էլ չբերեն քեզ այստեղ։

—Ի՞նչ ես ասում, տէրտէր ջան, ես ըստեղի աղ ու հացը ո՞նց կմոռանամ։

41

Քահանան ծառային ուղարկում է մասվաճառ Դաւթից միս առնելու. իսկ ինքն եկեղեցի է գնում քարոզելու։

Ծառան դատարկաձեռն վերադառնում և տեսնելով որ տէրտէրը տանը չէ, ինքն էլ գնում եկեղեցի քարոզը լսելու։ Այն րոպէին, երբ քահանան քարոզի մէջ Դաւիթ մարգարէի անունն է տալիս այս խօսքերով.—«Ի՞նչ ասաց Դաւիթը»։

Ծառան ժողովրդի միջից գոռում է.—«Ասաց, մինչև որ աէր հայրը խորովածացուի փողը չվճարէ, էլ միս չեմ տայ ձեզ»։

42

Քահանան խոստովանեցնում էր մի գո-

ղի. այդ միջոցին գողը քահանայի ժամացույցը գողանում է։

—Գողությունն արած կաս, որդի, հարցնում է քահանան,—ինչ ես գողացել։

—Մի ժամացույց։

—Ահա, տեր հայր, վերցրու, քեզ լինի։

—Ո՛չ, տիրոջը պէտք է տաս։

—Տիրոջը տուի, չառաւ, տէր հայր։

—Ուրեմն՝ քեզ լինի։

43

Մոլլա Նասր-էդ-դին մտնում է սափրիչի մօտ և խնդրում որ ածիլէ իր երեսը։

Ածիլելիս սափրիչը մի քանի տեղով մոլլի երեսը կտրատում է և արիւնը կանգնեցնելու համար բամբակի կտորները է կպցնում վէրքերի վրայ։ Եւ երբ սափրիչն երեսի մի կողմը վերջացնելով՝ կամենում էր միւս կողմն էլ սկսել,—

—Բաւական է, բաւական, ասում է մոլլան։

—Ինչու՞, հարցնում է սափրիչը։

—Շնորհակալ եմ, էս մի կողմս դու բամբակ ցանեցիր, միւս կողմս էլ մատդիր եմ բուրդ ցանել տալ։

44

Միաչքանին վիճում էր երկաչքանի մարդու հետ։

—Ես ձեզնից շատ բան եմ տեսնում, պնդում էր միաչքանին, և կարող եմ այդ ապացուցել։

—Դա անկարելի բան է, ինչպէս թէ շատ։

—Շատ պարզ բան, ես՞ տեսնում եմ ձեր երկու աչքն այն ժամանակ, երբ դուք տեսնում էք միայն իմ մի աչքը...։

45

—Կարծեմ ձեզ հարմնացու է հարկաւոր։

—Ոչ, ներեցէք, ես դեռ բախտ չեմ ունեցել կնոջս թողնելու։

46

—Խնդրում եմ ինձ վկայական տաք, որ ես ձեր դպրոցում հինգ տարի օրիորդ եմ եղել։

—Դիմեցէք խնդրեմ բժշկին, այդ նրա գործն է։

47

Վրացի իշխանը ծառային պատուիրում է.

—Գնա բժշկին հրաւիրիր և ասա, որ իշխանն ուռել է, գլուխը դարձել է ձմերուկ, ոտները եմիշ, իսկ մատները խիար։

—Այդքան բան չեմ կարող միտս պահել, պատասխանում է ծառան,—ուղղակի կասեմ, որ իշխանը դարձել է քստան։

48

—Ահա քանիերորդ անգամն է, որ ձեզ զողութեան համար բերում են ինձ մօտ,—յայտնում է դատաւորը գողին.—յոյս ունիմ որ կուղղուէք և այլ ևս չեմ տեսնիլ ձեզ այստեղ։

—Մի՛թէ դուք, պ. դատաւոր, հրաժարական էք տալիս,—պատասխանում է գողը։

49

Երկու թուրք և երկու հայ մի կով ու մի եզն առաջներն տուած ներկայանում են դատաւորին։ Տան տնձինք երդումով վկայում են, որ այդ անասունները թուրքերին են։

—Ես ձեր վկայութեանը հաւատում եմ, բայց եզան և կովի վկայութիւններն էլ պէտք է միանան ձեր վկայութեան հետ, ասում է Գուղին և հրամայում է կովին և

եղան առաջ տանել Թուրքի գիւղի մօտ բաց Թողնեն և յետոյ հայի գիւղին։

Այս գործողութեանը, որ խանն էլ ներկայ էր, տեսնում է որ անասունները Թուրքի գիւղը չեն մտնում բոլորովին. իսկ հայի գիւղի մօտ բաց Թողածին պէս՝ անասունները բառաչելով ուղղակի գնացին հայի տունը։

50

Սրանով դուք երեք անգամ է, որ գողութեան մէջ բռնւում էք,—հարցնում է դատաւորը յանցաւորին ինչպէս չէք ամաչում։

—Ուղիղ է, պարոն դատաւոր,—պատասխանում է յանցաւորը,—առաջին անգամին և՛ ամաչում էի և՛ վախենում, իսկ այժմ՝ ոչինչ, սովորեցի։

51

Թիֆլիզեցի մի պարոն ծառայի հետ ճաշի համար պաշարեղէն գնելուց յետոյ՝ ծառային պատուիրում է, որ առած ցոցխալ ձկները ջուրն ածէ, չսատկեն։ Ծառան գիւղից նոր էր եկել՝ խամ տղայ էր, տանում է ձուկը կամրջից ջուրը թափում, մտածելով որ, իր պարոնը չափա-

զանց բարի մարդ է երևում, որ բռնած ձկները փողով առնում և ազատում։

52

—Ինչ կասէք. պ. պրոֆեսոր, որդուս ինչ դարձնեմ—բանաստեղծ թէ նկարիչ։

—Ի հարկէ բանաստեղծ, այժմ թուղթը անհամեմատ էժան է կտաւից։

53

—Մալրիկ, խնդրեմ բացատրես, ինչ է նշանակում թշուառ սէր։

—Թշուառ սէրն այն է, սիրելիս, երբ ջահիլ աղջիկը սիրում է անփող մարդուն։

54

Միլտոնին հարցնում են.—Ինչի՞ն է, որ մի քանի երկրներում թագաւորը կարող է 14 տարեկան հասակում թագ ընտանալ, իսկ ամուսնանալ - միայն 16 տարեկան հասակում։

—Նրա համար,—պատասխանում է Միլտոնը,—աւելի հեշտ է մի ամբողջ թագաւորութիւն կառավարել, քան թէ մի կնոջ։

55

—Արածդ մի բանի նման չէ,—բարկանում է տանտիկինը խոհարարի վրայ, — ինչպես էիր, որ կատուն մտել է խոհանոցն և տհապին կտոր ձուկը թոցրել։

—Բան չկայ, աղջիկ պարոն, կատուն դրանից չի հիւանդանալ։

56

Մէկն իր որդուն բերում է մոլլի մօտ և խնդրում որ կարդալ—գրել սովորեցնի։

Մոլլան մի թուման է նշանակում ուսումնավարձը։

—Վա՛յ, ինչ ես ասում, մոլլա, ասում է երեխայի հայրը,—մի թումանով մէկ էշ կառնեմ։

—Ա՛ռ, պատասխանում է մոլլան, — այն ժամանակ որդուդ հետ միասին երկու էշ կունենաս։

57

Մի բռնաւոր իշխանի միջնորդում էին, որ իր հպատակներին չնեղացնէ, միջոց տայ, որ հանգիստ կեանք վարեն, աշխատեն՝ օգտաւէտ լինին թէ իրանց և թէ իշխանին։

—Ժողովուրդը որ կայ, մկներով լիք

տոպրակ է,—պատասխանում է իշխանը, —պէտք է միշտ այն տոպրակը շուռ-մուռ տալ, որ մկներն անդադար շարժ-ման մէջ լինին, տակն ու վրայ լինին և ժամանակ չունենան կրծել—ծակել տոպ-րակը՝ դուրս գան միջից ու ցրուին։

58

—Ես ձեզ անչափ սիրում էի, իսկ դուք ուրիշի հետ էք ամուսնանում, նը-կատում է մի երիտասարդ։

—Մի նեղանաք, ես ձեզ աչքի առաջ կունենամ,—պատասխանում է օրիորդը։

59

Ես ձեզ սիրում եմ, չգիտեմ թէ ինչ անեմ, որ ինձ լսէք։

—Լսողն ականջներս են, կաշառեցէք նրանց։

—Լաւ, ինչով։

—Շողակնեայ օղերով։

60

Ուղղակի թուրքը յափշտակել էր մի անգամ իր ցեղակից մսագործի արծաթէ փողերը։ Վերջինս գանգատւում է խա-նին, բայց վկայ չունէր։

Հնարագէտ Պըլը-Պուղուն կանչում են։

Պուղին փողերը եռման ջրի մէջ է լցնում և տեսնում են որ ջրի երեսն իւղի շերտ է բռնել. սրանից իմացւում է որ մսագործի փողերն են և տալիս են նրան։

61

Մէկ եպիսկոպոս իր ձեռնադրած քահանային քննում էր, թէ տեսնի արդեօք բան իմանում է։

—Նորընծայ, Քրիստոս աշխարհիս վրայ քանի՞ տարի է մնացել։

—Ծառադ եմ, ո՞ր Քրիստոսն ես հարցնում։

—Այ տղայ, քանի՞ Քրիստոս է եկել աշխարհս։

62

Մի մարդ իր հիւրերին զարմացնելու համար միշտ սուտ էր խօսում և իր ասածները հաստատելու համար վկայ էր բերում ծառային։

—Աղա՛, —ասում է մէկ օր ծառան, —դու միշտ սուտ ես խօսում ու ինձ էլ վկայ բերում, ախր իմ օգուտն ի՞նչ է, որ հոգիս սատանին եմ պահ տալիս։

—Ամեն մի ստիս վկայութիւն տալու

համար քեզ մի կոպէկ կտամ,— ասում է աղան։

Ծառան համաձայնում է։

Մի անգամ աղան չափազանց մեծ սուտ է խօսում իր հիւրերի մօտ և ձայն է տալիս.

—Ա՛յ տղայ Սիմոն, այնպէս չէ՞։

—Չէ՛, աղա, պատասխանում է ծառան, ես էդպէս մեծ ստի վկայութիւնը 1 կոպէկով չեմ բաբրշել։

X 63

Մոլլա Նասր-էդ-դինի օրով ապրում էր մի գիտնական, որի հետ ոչ ոք չէր կարողանում խօսքի բռնուել։ Սա գալիս է մոլլի մօտ և պատահում է նրան իշի վրայ նստած։

—Ես կամենում եմ քեզ մի քանի հարցմունք առաջարկել, որ ես դժուարանում եմ գտնել։

—Խնդրեմ, համեցիր, ես պատրաստ եմ պատասխանելու,—ասում է մոլլան։

—Ո՞ւր է գտնուում երկրիս կենդրոնը։

—Երկրիս կենդրոնն իշիս կանգնած տեղն է, եթէ չես հաւատում, չափիր, տես։

Գիտնականը մոլլի պատասխանից ապշած՝ մի ուրիշ հարցմունք է տալիս։

—Քո կարծիքով քանի՞ աստղ կայ երկնքում։

—Ուղիղ այնքան, որքան մազ կայ իշխս վրայ, եթէ կասկածում ես՝ հաշուիր, տես։

—Հապա թէ այս հարցմանս էլ պատասխանես.—իմացիր միրուքիս մէջ քանի՞ մազ կայ։

—Միրուքիդ մէջ ուղիղ այնքան մազ կայ, որքան իշխս պոչի վրայ, կարող ես ստուգել, եթէ կամենաս։

Մոլլի այս երրորդ պատասխանը մանաւանդ՝ բոլորովին ապշեցնում է գիտնականին, որ իրան յաղթուած համարելով՝ թողնում հեռանում է։

64

Մի հայ և մի թուրք գալիս են պարսից Շէյխ Իսլամի մօտ գանգատի։ Շէյխ-Իսլամը կամենալով կաշառք ստանալ նրանցից, ասում է.—Պարոններ, ամեն մէկդ ձեզ արդարացնելու համար պարտաւոր էք չորս-չորս սպիտակամորուս և երկու-երկու ևամորուս վկաներ ներկայացնել։

Հայը Շէյխ-Իսլամի միտքը հասկանալով՝ առնում է չորս գլուխ շաքար, երկու գրուանքայ թէյ, գիշերով Շէյխ-Իսլա-

մին ղրկում և միւս օրը դատաւորից իր արդարութեան թուղթը ստանում է։

65

— Մէլիքը վարունգի վրայ աղ էր ցանում և ուտում։ Պուղին էլ մի ուրիշ աղաման ձեռն առած մէլիքի անմաղ գլխին անվերջ աղ էր ցանում։

— Ա՛յ յիմար, այդ ի՞նչ ես անում, գժուել ես, ի՞նչ է։

— Մէլիք, Պուղին քեզ մատաղ, խելքըդ անհամել է, աղ եմ անում, որ համոզնայ։

66

— Ողորմութիւն արէք, ի սէր Քրիստոսի։

— Տասը ռուբլիանոցի մ նը ունիս։

— Ունիմ, համեցէք։

67

— Ո՞ւր ես գնում։

— Բաղնիս։

— Ինչո՞ւ։

— Եպիսկոպոսն ինձ այնպէս սառն ընդունեց, որ մրսեցի։

68

—Էս ինչ է նշանակում իմ միրուքս է սպիտակել, քու էլ գլխիդ մազը։

– Դա կնշանակէ, որ ես գլխով եմ շատ աշխատել, իսկ դու բերանով։

69

Լոռեցի շաշ Մաթոսը հունձ անելիս ձեռն մանգաղով կտրում է և շտապ-շտապ գալիս դարբնի մոտ։

—Տօ տնաւերը, որ գիտէիր մանգաղիդ հունարը կտրելն ա, էլ ինչ էիր ինձ տալիս։

70

—Մոլլա, փլաւ են տանում։

—Ի՞նձ ինչ։

– Քեզ են տանում։

—Քեզ ինչ։

71

Ինչպէս կուզես, որ քեզ սափրեմ, – հարցնում է շտապօս սափրիչն իր յաճախորդին։

—Առանց խօսելու,—պատասխանում է յաճախորդը։

72

Մոլլա Նասր-էդ-դինի հայրենի քաղաքում գլուխը խուզելու համար սովորաբար 2 կոպէկ էին տալիս սափրիչին։ Մի անգամ մոլլան էլ իր գլուխը սափրել է տալիս, բայց փոխանակ 2 կոպէկի, միայն 1 կոպէկ է վճարում։ Սափրիչը զարմանալով ասում է մոլլին.

—Ինչու՞ ես սովորութիւնը խախտում, 1 կոպէկս կտրում, տուր 1 կոպէկն էլ։

—Ի՞նչպէս չէ,—պատասխանում է մոլլան,—չէ՞ որ գլուխս ճաղատ է, ուրեմն՝ նրա կէսն ինքն Աստուածն է սափրել, որի համար գիշեր ու ցերեկ շնորհակալ եմ լինում Նրանից. իսկ դու ուզում ես Աստծու չարչարանքի բաժին էլ ստանալ։

73

Գողը վերցնում է մի մեծ չարաւ, լուսնեակ գիշեր մի աղքատ մարդու տուն է մտնում։

Տանտէրը նկատել էր նրան և քնած էր ձևացել, գողը չարաւը փռում է տան մէջ տեղն և ընկնում քունջ ու պուճախը, որ գտածը չարաւի վրան դարսի։

Տանտէրը կամաց վեր է կենում և պարկում չարաւի վրայ։

Գողը շատ է դէս ու դէն ընկնում, ոչինչ չի գտնում, փոր-փոշման, յետ է դառնում, որ չալասաւը վերցնի գնայ. և ի զարմանս իրան՝ ինչ է տեսնում— տանտէրը չարասաւի վրայ ձգուած։

«Լաւն էն է, որ սուս ու փուս չարասաւս գրաւ թողնեմ ու դուրս սլկուեմ, իսկ եթէ յետ ուզեմ, եախէս ձեռը կըտամ»։

Նա թողնում է չալասաւն ու կամացկամաց դուրս քաշւում։

—Փակիր դուռն,— աղաղակում է տանտէրը,—որ էլ ուրիշ մարդ չմտնի։

—Հա, քո արևը,—ասում է գողը դուրս գնալով,—որ բաց էր թողած, շատ ինաս տեսար, էլի. ես դոշակը բերի տակդ գցեցի, մի ուրիշն էլ եօրդան կբերի վրէդ կգցի, թող բաց մնայ։

74

Ղարադաղցուն հարցնում են.—ինչի էք էդպէս մեծ-մեծ մորթէ գդակներ ծածկում, կասես արջեր լինիք։

—Ապրանքը որ տիրոջը չնմանի, կասեն գողանովի է, - պատասխանում է ղարադաղցին։

75

Գողն ուզում էր խանութ կտրել։

—Ի՞նչ ես անում այդտեղ, հարցնում է անցորդը։

—Զուռնա եմ ածում, պատասխանում է գողը։

—Ի՞նչ տեսակ զուռնա է, որ ձէնը չի դուրս գալիս։

—Անց կաց գնա, մի՛ խանգարիր, էգուց դուրս կգայ։

76

Մէկը գիւղից դուրս Պլը-Պուղուն պատահելով՝ հարցնում է.—Պուղի, այս գառը տուողն ասել է. «Եթէ թող տաս այս գառն, դու կմեռնես, եթէ տուն տանես, կինդ կմեռնի». այժմ ի՞նչ անեմ, մնացել եմ երկու սրի մէջ։

—Ոչ թող կտաս, որ դու մեռնես, ոչ էլ տուն կտանես, որ կինդ մեռնի։ Մի լաւ կրակ վառիր, մորթենք, լաւ խորոված անենք, ուտենք. դու էլ ողջ կմնաս, կինդ էլ։

77

Քահանան երազում տեսնում է որ մէկը ժամից է տալիս իրան. քնի մէջ

սկսում է բարձր ձայնով պահպանիչ ասել։ Տիրուհին վախենալով՝ զարթեցնում է նրան։

—Անիծած, ասում է քահանան զարթելով,—չէիր կարող համբերել, որ ժամոցս առնէի, յետոյ զարթեցնէիր։

78

Թատրոնի օթեակում նստած երկու կանանցից մէկը հարցնում է.

—Հեռադիտակդ բերիլ ես։

—Այո, բայց չեմ կարող գործածել։

—Ինչու։

—Ապարաջանները մոռացայ վերցնել։

79

—Անքնութեան դէմ դեղ տուիր հիւանդին, հարցնում է բժիշկը։

—Դեռ ոչ։

—Ինչու։

—Նա քնած է։

—Զարթեցրու և տուր։

80

Մոլլա Նասր-էդ-դին խանին տեսութեան գնալիս, սինու մէջ երեք մեծ դեղձ դարսած դլխի վրայ տանում էր։ Ճանա-

պարտին դեղձերը սկսում են շարժուիլ. մոլլան բարկացած գոռում է դեղձերի վրայ.

—Եթէ չհանգստանաք, ձեր հոգին ակռէքով կհանեմ։

Մի քանի քայլ անելով, տեսնում է որ դեղձերն էլի օրօրւում են, ենթադրում է որ՝ դեղձերի մէջ հին ընտանեկան թշնամութիւն կարող է լինել, որոշում է վերջացնել այս խռովութիւնն և ուտում է երկու հատը՝ թողնելով մի դեղձ միայն ոտագին սինու մէջ և ներկայանում է խանին։

Խանը մոլլից լսելով այս տարօրինակ ընծայի պատճառը, կուշտ ծիծաղում և մոլլին մի լաւ խալաթ է տալիս։

81

—Որտեղ է մայրիկդ, Հայկակ։

- Երկու ժամ կլինի, որ մի վայրկեանով հարևանի մօտ է գնացել։

82

Թիֆլիզի Նորաշէն եկեղեցու Տէր-Յակոբը խմող էր։ Առաջնորդ Ներսէս (Ներսէս Ե-րդ կաթուղիկոս) պատուիրում է նրան որ իր նշանակած բաժակով օրէն միայն մէկը խմէ. բայց Տէր Յակոբը դարձեալ հարբում էր։

Սրբազանը բարկանում է վրան.

—Ի՞նչ է, դու էլի քոնն ես անում. ո՛չ, Սրբազան Հայր, քո նշանակած բաժակով օրէն մէկն եմ խմում։

Ներսէս բաժակը բերել է տալիս, տեսնում է որ բաժակի բերանը մոմով այնքան է աւելացրել, որ իսկական չափից 3 անգամ աւելի գինի կմտնէր բաժակի մէջ։

83

Մի աղքատ քահանայի փիլոնը գըզ-դըզուել, ծուիծուի էր դառել. փող չունէր որ նորն առնէր։ Խելացի տէրտէրակինը խուզում է իրանց սեամագ շներին, բուրդը 15 անգամ լուանում, գզում, մանում, հինում, գործում, մի լաւ փիլոն կարում, տէրտէրին տալիս։ Տէրտէրն ուրախանում, մի քանի անգամ աղօթք-օրհնութիւն կարդում, վրան ձգում, մի քանի տարի կառավարում։ Գալիս է ժամանակ փիլոնը մաշւում է. տէրտէրակինը դրանից տէրտէրի համար շալուար է կարում. հնացած շալուարն էլ վերջն իշի համար փոքրաչուլ շինում։

Տէրտէրն երբ իշի չուլը ծռուած, փորն ընկած է տեսնում, գլուխը շարժելով այս ոտանաւորն է ասում. —

«Հայ ժամանակ, ժամանակ.
Մի ժամանակ շներ էիք շատ հաչան,
Ցեղոյ հրեշտակները վրադ իջան,
Այժմ էլ հագել ես սև իշի ջուխտակ
փչան։

84

Անգլիացի ճանապարհորդը Պլը-Պուղու համբաւը լսել էր՝ գալիս է նրան տեսնելու. օտարականը սկսում է ձեռքի շարժումներով այս երեք առաջարկն անել Պուղուն և զարմանալի պատասխան ստանում նրա՛ից. —

Նախ՝ մատով գետնի վրայ շրջան է քաշում, Պուղին մատով մէջտեղից կիսում է։

Ապա՝ եւրոպացին ձեռներն իրարու մօտեցնելով գնդի ձև է տալիս, Պուղին նոյն գունդը շրջապատում է աւելի մեծ կամարով։

Անգլիացի հնախոյզը միայն ցուցամատն է բարձրացնում, իսկ մեր Պուղին —իր երեք մատները։

Վիւա՛, վիւա՛, Պուղի! (կեցցե՛ս, կեցցե՛ս, Պուղի)։

Հնախոյզի ընկերը հետաքրքրութեամբ հարցնում է։

— Ես հարցրի՝ աշխարհս այսպէս կո-

լոր է. Պուղին պատասխանեց—կէսը Ջուր է։ Ես հարցրի՝ երկրագունդս օդով է պատած. նա աւելացրեց—տիեզերքով և երկնային կամարով է շրջապատուած։ Ես ասացի՝ Աստուած մի է. նա պատասխանեց—մի Աստուածութեան մէջ երեք անձն՝ Հայր, Որդի և Ս. Հոգի։ Այս պատճառով գովեցի նրա արժանաւորութիւնը։

Իսկ երբ Մէլիք-Շահնազարն և ուրիշներն հն Պուղուց բացատրութիւն հարցնում.—

Պուղին պատասխանում է.—Նա մի կլոր գիծ քաշելով, հարցրեց՝ մի սինի փլաւ կայ, կուտես. ասացի՝ կէսը կուտեմ։ Յետոյ ասաց՝ մի ման լաւ խորոված կայ, այն էլ կուտես, ասացի՝ բերանը ծածկի, չսառչի, մինչև փլաւն ուտեմ։ Նա մի մատով ասաց՝ աչքդ կհանեմ. ես էլ երեք մատով ասացի՝ երկու աչքերդ կհանեմ, քիթդ էլ կպոկեմ, խելօք կաց, հա։

85

Ճանապարհին գիւղացու էշը սատկում է. գիւղացին կաշին քերթում, ուսը ձգած գնում էր։ Պատահում է նրան գիւղից եկող մի ուրիշ գիւղացու։

—Ի՞նչ թագայ խաբար կայ, - հարցնում է իշատէրը միւսին։

—Ոչինչ։

—Ապա գիւղումը չե՞ն խօսում, թէ իմ էշը սատկեց։

—Չէ։

— Աստած տայ, սուտ ըլի, ասում է իշատէրը։

86

Պարսից շահը մի գիշեր սրտաբեկ էր և տրտում. հրամայում է մէկ երգիչ բերեն։ Յետոյ երբ բաւական ուրախ է զգում իրան, հրամայում է հազարապետին, որ 1000 թուման պարգևէ նրան։ Առաւօտն երգիչը գնում է հազարապետի մօտ, որ ստանայ շահի պարգևը. հազարապետն էսօր-էգուց ձգելով՝ չի տալիս, վերջն երգիչը դիմում է շահին.--

—Ա՜յ մարդ, ասում է շահը, ի՞նչ ես տուել ինձ այն գիշերը, որ չես կարողանում յետ ստանալ. երգեցիր քո բերանով, ես ուրախացայ, ես էլ իմ բերանով քեզ 1000 թուման խոստացայ, դու ուրախացար, շնորհակալ չե՞ս, որ հաւասար պրծանք։

87

Էջմիածնի մառանապետը շարունակ

իւղ էր գողանում։ Ծախսաքրաը վարդապետը շատ էր աշխատում նրա գողութիւնը բռնելու, բայց չէր կարողանում։ Մէկ անգամ մտքում դնում է, ինչպէս էլ լինի, նրա գողութիւնը բռնի և կանգնում է մառանի դռան մօտ։ Երբ մառանապետը մառանից դուրս է գալիս, հայը սուրբը սկսում է զանազան հարցմունքներ անել նրան, թէ՝ ո՞ր տեղացի ես, քանի՞ տարեկան... Մօտ կէս ժամ արևի տակ կանգնած էին։ Մառանապետի գլխարկի տակից զողացած իւղը հալուելով իջել էր ծոցն և ոտներից դեռին էր կաթկաթում։

Մառանապետ, շատ քրտնեցիր, նկատում է ծախսարար վարդապետը։

—Է՜հ, հայը սուրբ,—ասում է նա,—ձեր հարցմունքներին պատասխանելը մարդուս ոսկորներն էլ կհալեցնէ։

Իսկ վարդապետն այս երգով հասկացնում է նրա գողութիւնը.—

—«Որպէս զիւղ զի իջանէ ի մօրուացն մառանապետի ի գրպանակս ըզդեստուցն նորա»։

88

Մէկը մոլլա Նասր-էդ-դին-ից էշ է խնդրում, որ չրաղաց գնայ.

—Հայ ափսոս, շատ ափսոս,—ասում է մոլլան,—քիչ առաջ դաշտն ուղարկեցի։

Հակառակի պէս, այդ ըոպէին, էշն ախոռում զռում է։

—Թէ էշդ ոանը չէ, հապա այդ ինչ զռոց է։

—Իշուն աշէ, իշուն,—պատասխանում է մոլլան,—ոպիտակ միրուքաւորիս չի հաւատում, իշի զռոցին է հաւատում։

89

Պօլսում յոյներն Օսման անունով մի թուրքի քրիստոնեայ են մկրտում, անունը Եանի դնում։

Մկրտուած Եանին ծառայ է մտնում յոյն մետրոպոլիտի մօտ և ինչպէս քրիստոնեայ պարտաւոր էր պահքերը կանոնաւոր պահել։

Մետրոպոլիտը մէկ անգամ վրայ է հասնում, երբ Եանին տապակած փափլիկ վառիկ քշտում էր ոսկորներով, ըսկըսում է խիստ յանդիմանել նրան.—

—Ա՛յ դու, անզգա՛մ, ինչպէս ես համարձակւում այսպիսի մեծ պահս խախտել և մսեղէն ուտել։

—Կերածս միս չէ, սրբազան, լոբի է։

—Ինչպէս թէ լոբի է, անպիտա՛ն,

չեմ տեսնում, որ առաջդ վառիկ է դրրուած։

—Մի թէ,—պատասխանում է Եանին համբերութիւնը հատած,—դուք ընդամենն 3 անգամ էք ջուրը կոխել ինձ և ասել. «Օսմանը դառնայ Եանի, Օսմանը դառնայ Եանի...», ես իսկ, էդ մունդռիկ վառիկին 23 անգամ եմ ջուրը կոխել և անդադար կրկնել՝ «Վառիկս դառնայ լոբի, վառիկս դառնայ լոբի...» բայ, չդառաւ։

90

Մի դինեսէր, փողոցով անցնելիս, տեսնում է մարդիկ ժողովուած լաց են լինում։ Հարցնում է մէկին, էդ ինչի են լաց լինում, ինչ խաբար է։

—Մարդ է մեռել, լաց են լինում։

—Է՜հ, հէր օրհնածներ, ես հէնց դիտեմ գինու կարան ա կոտրուել. դէ, մարդ ա, պիտի մեռնի, ապա ինչ, էլ ինչի էք լաց լինում։

91

Մէկ օր Պուղին ասում է.

—Ա. կնիկ, անտառում համեղ տանձ եմ տեսել։ մի ջուալ տուր, գնամ, լցնեմ, բերեմ։

Տանձը ժողովում, ջուալը լցնում և

վերադարձին մի աղբիւրի մօտ նստում, հաց ուտում և մի փոքր քնում։ Մի ուրիշ անտառաւոր գալով Պուղու տանձն իր ջուալն է փոխադրում և իր սալորը Պուղու ջուալը։ Զարթնում է Պուղին, բեռը շալակում, տուն է հասնում և խընդագին կանչում.

—Ա կնիկ, մի՛ տանձ եմ բերել, մի՛ տանձ, որ բերանդ չդնես, շաքարի պէս կհալի։

Կինը ջուալը դատարկելով ասում է.

—Ա՛յ մարդ, Աստուած կտրի քո խասիաթը, գնացել ես թթու շլորը ժողովել, բերել, ասում ես թէ՝ տանձ եմ բերել։

Այս անսպասելի եղելութիւնը Պուղին լմանալուն պէս՝ կանչում է զարմացած.

—Ա՛ կնիկ, ողորմի քո հօրը, մի լաւ նայիր, տես, ես Պուղին եմ, թէ ես էլ եմ փոխս ընկել։

—Այո՛, այո՛, դու իմ մարդ Պուղին ես։

—Ա՛ կնիկ, թէ ես Պուղին եմ, ես տանձ եմ ժողովել, շլոր որտեղից դուրս եկաւ։

92

Գողը մտնելով մէկի տունը, շալա-

կում է մոլուկն և դուրս գնում։ Տանտիկինը հարևաններին օգնություն է կանչում։

Ամուսինը զարթելով ասում է.

—Ա՛ կնիկ, բան չկայ, թող տանի, մոլուկի բանալին չ՚բռնա է։

93

Սպանոցին ասում էր գերմանացուն՝ ձեր լեզուն կոշտ-կոպիտ լեզու է, ես կարծում եմ որ Աստուած ձեր լեզուով է բարկացել Ադամի վրայ։

—Այո՛, ձեր լեզուն շատ քնքոյշ լեզու է,—պատասխանում է գերմանացին, —և ես կարծում եմ օձը ձեր լեզուով է խաբել Եւային։

94

—Պարոն, պարոն, վեր կացէք,—զարթեցնում է հիւրանոցի ծառան սառնասրտին անգլիացի ճանապարհորդին շտապով։

—Ինչո՞ւ, հարցնում է նա զարթելով։

—Հրդէհ... հրդէհ... Մեր հիւրանոցն այրում է...

—Մի՞թէ։

—Այո՛, կրակն արդէն 8-րդ համարին է հասել։

—Իսկ իմը քանիերորդն է։

—Տասնմէկերորդը։

—Հ՛ըմ, Ուրեմն՝ նեղութիւն կրիր զարթեցնել ինձ, երբ կրակը կհասնի 10-ըդ համարին։

95

Մի քիչ էլ լեզուդ դուրս հանէր,— կրկնում էր բժիշկը հիւանդ կնոջը,—մի քիչ էլ, մի քիչ էլ...

—Օա ինչ բան է, պարոն,—համբերութիւնը հատած, գոռում է հիւանդը,—միթէ կարծում էք դուք, որ կնոջ լեզուն վերջ չունի։

96

Մի յոյն պարծենալով ասում էր, թէ՝ բոլոր իմաստուն փիլիսոփաները Յունաստանից են դուրս եկած։

—Նրա համար է որ,—ասում է ունկնդիրներից մէկը,—հիմա այնտեղ և ոչ մի հատ էլ փիլիսոփայ չկայ։

97

Մի քանի երիտասարդ խօսքերը մէկ են անում, որ մոլլա Նասր-էդ-դինի հաշուով քէֆ անեն. մոլլին բաղնիս են տանում. ամենքը մոլլից ծածուկ մի-մի ձու-

են վերցնում։ Լողանալիս երիտասարդ-ներից մէկն առաջարկում է բաղնիքի վողը նա վճարի, ով չի կարողանայ մի ձու ածել։ Ամենքը համաձայնում են և թուխս նստելով սկսում են կռկռալ և մի-մի ձու ածել։ Մոլլան այս տեսնելով. թռնում է թախտի վրայ և սկսում ծուղ-բուղու կանչել։

—Ի՞նչ ես անում, մոլլա, հարցնում են երիտասարդները։

—Այսքան հաւերին գոնէ մի աքա-ղաղ անհրաժեշտ է,—պատասխանում է մոլլան։

98

Զարդախլուեցու կինը, առանց ա-մուսնու դիտութեան, իրանց ծանրաց ձին քրէհով է տալիս և մի մանէթ էլ ըէհ առնում։

Երբ մարդը տուն է վերադառնում և հաց ուզում, կինը խոնջով ուրախ-ուրախ առաջ է բերում հաց, պանիր և մի քանի վարունգ։

—Ա. մարդ, անգաճաքանուկն ի՞նչ ես տալի, որ մի լաւ բան առեմ։

—Հը՛, էդ ի՞նչ ա էլել, ա՛ կնիկ, մի սատ տեսնեմ, էդ ի՞նչ խաբար ա։

—Բա չես ասիլ, ա մարդ, ես ըսօր քեզ համար մի մանէթ եմ դադել։

—Ղոռբթ, ա կնիկ, դու ըլես էն Աստծը, մի դրուստ ասա, տեսնեմ հրդիան ես դադել. ով ա տուել, ընչի համար։

—Բա չեմ ասիլ, ես ըսօր մեր ձին քրէհով տուի երկու մանէթի, մի մանէթ էլ բէհ առայ,—փողը կոլոլած մարդու առաջ ձգում,—էդ էլ էն մանէթն ա։

—Պահ, քու տունն Աստած քանդի. մի վէր մեր ալբրի ջուալը լցուեց։ Էս սհաթիս սուս ու փուս վեր կալ էդ մանէթն ետ տուր ու ձին բեր, թէ չէ գըլուխդ աղցան կանեմ,—և մանէթանոցը շալրտում կնոջ առաջը։

—Ա մարդ, արի Աստծուն մտիկ ա-րա, ինձ բէաբուռ մի անիլ, ըլած բանին էլ ինչ անեմ, առ մանէթը պահի,—կըրկին մանէթանոցը շպրտում մարդու առաջ, որն ընկնում վարունգի կլէպի վրայ։

Հէնց այդ միջոցին կթի այծը մօտենում վարունգի կլէպներին և մանէթանոցն էլ հետը վերցնում։

—Ա մարդ, էծը մանէթանոցը կերաւ,—աղաղակում է կինը։

Մարդը վեր է թռչում, ձեռը տանում այծի բերանը, բայց կարողանում է միայն մանէթանոցի ծայրից բռնել։

—Ա՛ կնիկ, չուստ արա, դանակը բեր, քանի էծը մանէթանոցը կուլ չի տուել, բողազը կտրենք, մանէթը հանենք։

Կինը դանակը բերելուն պէս՝ մարդն այծի վիզը կտրում, բայց իհարկէ ոչինչ չի գտնում։ Նա փոշմանած՝ թըրըմփալի տեղը նստում, ջուխտ ձեռքով գլխին բամփում, ասելով.

—Աստած որ մարդի փայն առնելիս ըլի, առաջ խելքը կառնի, եդով դովլաթը. ախ, իմ էծը, ջան իմ էծը...

99

—Ի՞նչ էք կամենում։

—Ոչինչ։

—Ինչու՞ ուրեմն զանգահարեցիք։

—Ձեր դրան զանգակի վրայ գրուած է «Նոր զանգահարէք։

100

Մի մարդ շատ խնդրում էր Պըլը-Պուղուն, որ իր նորածին երեխային կընքահայր դառնայ։

—Օհան, Աստծուն հաւատա,—պատասխանում է Պուղին,—որ իմ երեխոնցրա էլ ուրիշի եմ խառնել տալիս։

101

Ժլատ հարուստը բարիկենդանի գիշերը ցամաք հաց էր ուտում։ Երկար մտածելուց յետոյ, վերջապէս ձայն է տալիս իր կնոջը. «այ կնիկ, աշխարհումս մեռնել կայ, գոռ ու ջհանդամ, գնա, էն սոխի կէսը կտրի՛, բեր ուտենք»։

102

—Հայրիկ, դու ասում ես, որ ակկնոցների միջից աւելի լաւ է երևում։ Տուր ինձ, մի նայեմ, թէ մայրիկը որտեղ է թաղցրել կոնֆէտները։

103

Մէկին պէտք է սպանէին։ Դատաւորը խղճալով նրան, հարցնում է՝ ինքդ ընտրիր քեզ համար մահ, ինչպէս ես դամենում մեռնել։

—Գիտէք,—ասում է բռնուածը,—գլուխ կտրելը, խեղդելը, հրացանազարկ անելը չեմ հաւանում, և այդ պատճառով ես ամենից լաւ եմ համարում մեռնել ծերութիւնից։

104

Մաքով տարուած մէկը կանգնած

էր դերձակի մոտ, որ վեր էր առնում նրա չափը։

—Խնդրեմ նեղ չկարես,—ասում էր նա,—ոտները ցաւում են մաղոլից։

105

Մոլլա Նասր-էդ-դինի հայրը մի անգամ նրան ուղարկում է ոչխարի գլուխ առնելու. սա առնում, միայն ճանապարհին ուտում է գլխի վրայի միսն և մերկ գանգը դնում հօր առաջ։

—Այս ինչ է,—հարցնում է հայրը,—ուր են սրա ականջները։

—Երևի մեղէ է գործել, ականջները կտրել են։

—Իսկ աչքերն ուր են։

—Գուցէ կոյր է ծնուել։

—Հապա լեզուն ուր է։

—Հաւանական է, որ համր ծնուած լինի։

—Իսկ գլխի կաշին ինչ է եղել։

—Շատ կարելի է, անպէտք է եղել և կաշին քերթել են։

—Բայց նայիր, հայրիկ,—աւելացնում է մոլլան,—դրանց փոխարէն ատամները ինչպէս ամուր են, մինչև հիմա մէկն էլ չի ընկել։

106

Մի պարոնի շատ էր խանգարում իր առջևը նստած տիկնոջ գլխարկը։

Վերջապես նա չի կարողանում իրան զսպել.

—Ներեցէք տիկին, ես այս իմ տեղի համար 2 ռուբլի եմ վճարել, որպէս զի տեսնեմ...

—Ներեցէք պարոն,—պատասխանում է տիկինը,—իսկ ես իմ այս գլխարկին 20 ռուբլի եմ վճարել, որ մարդիկ տեսնեն։

107

Թիֆլիզեցի մի կին երեք թլուատ աղջիկ ունէր. երեքին էլ նշան էր դրել և շուտով պիտի պսակէր. գործը գլուխ եկած—պրծած էր, միայն հետևեալ անակընկալ միջնադէպն աղջկանց բաղդը կապում և պակասաւոր աղջկանց ուրիշների գլխին մի կերպ փաթաթող Թիֆլիզեցի կնոջ յոյսը խորտակում.—

Մէկ օր մայրը գործով տնից դուրս է գնում և աղջկանց խրատում է՝ որ եթէ մարդ գալու լինի նրանցից ոչ մէկին երդի հետ չխօսէ։

Մօրն սասած մարդը հակառակի պէս իր բացակայութեան ժամանակ գալիս է

և հէնց այդ մարդու ներս մտած բոպէին՝ սենեակի անկիւնից մի մուկ դուրս գալով՝ դիմացի կողմն է վազում. աղջկանցից մէկը մոռանալով մօր պատուէրը, գոռում է՝ մո՛ւտը, մո՛ւտը (մուկ). միւս քոյրն էլ՝ մուտը մտաւ ծատը (ծակ), մնաւ ծ:ատը. իսկ երրորդն՝ տո, տեմին (գեսլին) մտածնելը, մայրիտը (մայրիկ) հասա՞ց որ չիսէտ (խոսէք)։

Միջնադիպին ներկայ եղող մարդը թողնում, հեռանում է. այն գնալն էր, ինչ գնաց և էլ նշանածները չերևացին։

108

Ծերունի ժամկոչն անունն Աբրահամ էր։ Քահանան կարդում էր Աբրահամու գիրքը. այդ միջոցին ժամկոչն եկեղեցու անկիւնում կուչ եկած ննջում էր։ Քահանան հասնելով գրքի այն տեղը, ուր գրած է նահապետի անունը, ձայնը զլելով, կանչում է.

– Աբրահա՛մ, Աբրահա՛մ...

—Օրհնած, խօ ականջներս խուլ չեն, որ էդպէս բարձր ես կանչում,—ասում է քնաթաթախ ժամկոչը՝ օրօրուելով ուսաջ է գալիս,—դէ ասա, հը՞, տեսնեմ, ինչ ես ասում։

109

Պըլը-Պուղին մի քանի օրով տնից բացակայել էր. գալիս տեսնում է իր կինը հաւերը մորթել տուել, լաւ-լաւ կերակրներ պատրաստել, ինքն էլ հիւանդ ձևացել՝ անկողին է մտել և հինգ կոյս աղջիկ նրա ոտներն են տրորում։

— Ա՛ կնիկ, էս ի՞նչ մեծ պատրաստութեան մէջ ես։

— Ա՛ մարդ, չես գիտում, տարին մէկ անգամ գժութիւնս բռնում է, հիւանդանում եմ, մինչև որ էսպէս չեմ անում, չեմ լաւանում։

Պուղին ոչինչ չի ասում, ցաւակցում է միայն, քաղցը է վարւում հետը։

Հետևեալ շաբթին Պուղին է յիմար ձևանում և երկու անգամ սաստիկ ծեծում կնոջը։

— Այ մարդ,—հարցնում է կինը զայրացած,—էս ի՞նչ խայտառակութիւն է, որ գլուխս ես բերում։

— Այ կնիկ, քեզ մատաղ, շաբաթ երկու անգամ գժութիւնս բռնում է, մինչև քեզ չեմ ծեծում, չեմ լաւանում։

— Այ մարդ, քո գժութիւնը, իմ գըժութիւնը թունդ են եղել, վախում եմ թէ՝ մի օր էլ թունդ բռնի՝ ինձ թակե-

լով սպանես։ Մ՛յ մարդ, ԷԿ, ես իմ գժութիւնը թողնեմ, դու էլ քոնը։—Համաձայնում են։

110

Մի պարոն լրագիր էր կարդում։ Հեռուից անցնող քահանան տեսնելով նրան՝ մօտենում է և հարցնում.—

—Էլ՝, ինչ է, ինչ նոր խաբար։

Ա՛ռէր, խօլերան մտել է Բաղաւն, որտեղից որ է մեր գիւղը կհասնի, փախչենք, ապաստանենք։

—Տօ, ուր փախչենք, հազիր սպասում, որ գայ... Վայրաբաժինս չեն տալիս, կոպէկի կարօտ նստել եմ. էս ունաքանդ գեղումն էլ ոչ ծնւում են, որ մեռնեն և ոչ պակւում, որ ծնուեն։

111

—Ինչից է, որ էս մեքենան վազում է։

—Գոլորշու ուժից։

—Է՞... Է՛, դատարկ խօսք, եթէ գոլորշու ուժից լինէր, էն ժամանակ բոլոր բաղնիսները պէտք է վազվզէին քաղաքի փողոցներում։

112

—Ի՞նչ բանի համար ես բանտարկուել, հարցնում է բանտի կառավարիչը մի բռնուածի։

—Հարբուխը, ձերդ գերազնուութիւն։

—Հարբուխը։

—Այո՛, դժբաղդաբար, դիշեր ժամանակ ներս էի մտնում պատուհանով, որ իրեր գողանում, բայց յանկարծ հարբուխից փռշտացի և ինձ բռնեցին։

113

—Ո՞վ է մեղաւոր թուրք-հայկական կոտորածներին.—

Ազգերի պատասխանները.—

Ռուս —Վերջը կիմանանք։

Վրացին.—Ի հարկէ հայերը։

Գերմանացին.—Դրան ի՞նչ խօսք, որ հայերը։

Ֆրանսիացին.—Հայերը։

Անգլիացին.—Միմիայն հայերը։

Թուրք.—Աղային և Թոփչիբաշևը վրկայ, հայերը։

Հրէան.—Թուրքերը։

114

Վրացի ազնուականը Թիֆլիզ է գա-

լիս. քնելու տեղաշոր չէ ունենում, գի-
շերները վրայի հագուստն է հանում տակն
ու վրան ձգում։ Առաւօտները սովորու-
թիւն ունէր ձայն տալ ծառային, թէ՝ արի,
ունկողինս ժողովիր։ Ծառան մէկ օր ա-
սում է.—պարոն, շորերդ հագիր, եթէ
մի բան մնայ, դամ հաւաքեմ։

115

Հրէուհին պսակուելու ժամանակ լաց
էր լինում. մայրը մօտենում է մխիթա-
րելու։

—Ի՞նչ ես լաց լինում, յիմար, չէ՞
որ ես էլ եմ մարդու գնացել, բայց այդ-
պէս լաց չեմ եղել։

—Ի հարկէ այդպէս կասես,—պատաս-
խանում է աղջիկն արտասուախառն,—
քեզ հայրիկին են տուել, իսկ ինձ... օտար
մարդու։

✓ 116

Մոլլա Նասր-էդ-դինը բաղնիս գնա-
լիս, կնոջը պատուիրում է որ վերադարձ-
ին փլաւ եփած լինի։

Կինը փլաւն եփում է և բոլորն ինքն
ուտում։ Մոլլան վերադառնալով պահան-
ջում է պատրաստած ճաշը։

—Ի՞նչ ես տուում, ոյ մարդ, ուզում

ես հիւանդանաս, բաղնիսից նոր ես եկել, պարկիը, հանգստացիր, յետոյ կուտես։

Մոլլան լսում է կնոջը՝ պարկում, քունը տանում է։ Կինն էլ հէնց այդ էր ուզում. վեր է կենում մոլլի շրթունքներին լուղ քսում և մօրուքին էլ մի քանի բընձի հատիկներ շաղ տալիս։

Մոլլան զարթնում է. փլաւը դարձեալ պահանջում է։

Կինը բացականչում է.

— Վա՜հ, խելքդ կորցրել ես. ինչ է, հիմի ես որ ասում, կարելի է չհաւատաս, առ հայելին, ինքդ քեզ տես, թէ՝ փլաւ չես կերել, կուզես երկրորդ անգամ ուտել. շրթունքներդ և մօրուքդ մինչև անգամ դեռ չես սրբել։

Խեղճ մոլլան, մօրուքի վրան փլաւի հատիկներ տեսնելով, հաւատում է. կնոջից ներողութիւն խնդրում. սրբում բերանն և մօրուքը ու լուռ նստում։

117

Մի էրզրումցի երիտասարդ գալիս է Ալէքսանդրապոլ և ցանկութիւն յայտնում ամուսնանալու։

—Ի՞նչ զաւակարդի օրիորդ էք ցանկանում, տղա,—հարցնում է ծխատէր քահանան։

—Տէր-հայր,—պատասխանում է էրզրումցին,—մենք դասակարգին և տոհմին նշանակութիւն չենք տար. ես կցանկամ, որ իմ ապագայ հարսնացուս խոհեմ ըլլայ, առաքինի ըլլայ, բարոյական ըլլայ, սիրունատես ըլլայ, պարկեշտ ըլլայ, գործունեայ ըլլայ, աշխատասէր ըլլայ, արհեստագէտ ըլլայ, փողոր ըլլայ, խնայող ըլլայ և իր վիճակէն գոհ ըլլայ, բարեծնունդ և հալալ կաթնակեր ըլլայ...

Քահանան այլ ևս չի կարողանում համբերել մեր հոս-հոսի անվերջ ըլլայներին, կէս ծիծաղ՝ խօսքը կտրում է։

—Որդեակ, առանկ բարի աղջիկ մեր կողմերը չըլլար, եթէ ըլլայ, հորէն ձեր կողմերը կըլլայ, պարապ տեղը հոս ժամանակ մի կորսնցունէք։

118

—Օղին ձեր ամենամեծ թշնամին է։

—Այո, Տէր հայր, բայց միթէ Աւետարանի մէջ չէ՞ գրուած, թէ՝ սիրեցէք ձեր թշնամիներին։ Ես էլ ինչպէս Աւետարանի աշակերտ, սրբութեամբ կատարում եմ Նրա ամեն մի պատուէրը։

119

Աբդիւլ-Համիդ անունով մէկը մրա-

նում է Ստամբոլի թուրքերէն լրագրերից մէկի խմբագրատունը։

—Ի՞նչ էք կամենում, փաշա,—սիրալիր կերպով հարցնում է խմբագիրը Ահմէդ-Ալին։

—Ուզում եմ թերթիդ բաժանորդ դրուել,—ասում է Աբդիւլ-Համիդը։

—Շատ գեղեցիկ, բարեհաճեցէք ուրեմն վճարել 7 ռուբլի բաժնեգինը։

—Ո՛չ մի կոպէկ ինձնից ձեզ, դեռ ձեզնից ինձ կհասնի 5 ռուբլի։

—Այդ ի՞նչ 5 ռուբլի է ես չեմ հասկանում։

—Շատ իրա ացի պահանջ իմ կողմից։ Դուք հրատարակում էք, որ թերթիդ հետ տրուող պրեմիան առանձին արժէ 12 ռուբլի. պէտք չէ ինձ ձեր պրեմիան՝ ձեզ լինի, հանեցէք այդ 12 ռուբլիանոց պրեմիայի արժէքից թերթիդ 7 ռուբլի բաժնեգինը, մնացած 5 ռուբլին ուրեմն վերադարձրէք ինձ։

120

Մի ռուս զօրական Շուշի գնալու համար ձի է ուզում Մէլիք-Շահնազարից։ Նա ձեռքի շարժումով մի կերպ հասկացնում է, որովհետև ռուսերէն չգիտէին։

—Տաշի, տաշի (տար, տար)։

—Ցիմար, կացին չկայ, ուրադ չկայ, ինչով տաշեմ,—ձեռքի շարժումով պատասխանում է Պուղին։

—Սկարէյ, սկարէյ (շուտ, շուտ)։

—Իբր թէ փայտը տաշեց, տաշեղը շատացրեց, մնաց կսկարէնքը, որ փլաւ եփի, ուտի։

—Պադի սուդա (այստեղ եկ)։

—Դուլգեար ուսաս Բադին գեղումը չի, գնացել է Գանձակ։

—Ախտի չօրտ (ա՛յ սատանայ)։

—Զօռն կենայ բգիդ, քո հոր, քո մօր բգին։

121

Դարդրքաշ անունով մէկը շատ մտածելուց մի շաբաթ հաց չէր ուտում։ Կինը մէկ ամսան բրթոշ բերում մարդու առաջը դնում՝ աղաչանք-պաղատանք անում, որ ուտի։ Այն է գդալը վերցնում է, որ բերանը տանի, մի մարդ երդիկից ձայն է տալիս՝ «Դարդրքաշ ախպէր, ախր մեր էշը քուռակ է ծնել, պոչ չունի»։

—Ա՜խ, քար ուտեմ ես, քացախ խըմեմ, զահրումար ուտեմ,—Դարդրքաշը դառնում է կնոջը,—էգուց էն քուռակը մեծանայ, փայտի տանեն, ճամբին ցեխ որ ընկնի, ինչից բռնեն, բարձրացնեն,

երբ պոշը չունի։ Ինձ ասում ես հաց կեր, էլ ինչպէս ուտեմ, դէ, ըրթոշդ վեր կալ, տար, իմ հացս հարամ է, ոչ դիշերը հալալ հաց ունիմ, ոչ ցերեկը

—Այ մարդ, Աստուած սիրես, հաց կեր, ուրիշի ցաւը—դարդը քեզ չեն տուել, քեզ ինչ։

Դարդըքաշը դեռ հաց չէր ուտում։

122

—Ինչով էք հասասասում, որ այս մարդն է ձեր թաշկինակի դողը,—հարցնում է դատաւորը։

—Տէր դատաւոր, իմ թաշկինակս կարմիր շրջագծով էր և այս մարդու ձեռին տեսայ։

—Այդ փաստ չէ, ահաւասիկ իմ թաշկինակի շրջագիծն էլ կարմիր է,—և ցոյց է տալիս իր թաշկինակը։

—Ձեմ զարմանում, տէր, որովհետև ինձնից մի քանի թաշկինակ են գողացել։

123

Սեքստոս Ե-ը մինչև պապ ընտրուելը Հռոմի փողոցներով կուացած էր մանգալիս. հէնց որ պապ ընտրեցին, նա սկսաւ ուղիղ մանգալ։

Երբ պատճառը հարցնում են, պատասխանում է։

—Կարդինալ ժամանակս կռացած էի ման գալիս՝ արքայութեան բանալին գտնելու համար. իսկ այժմ, որ արդէն ձեռիս է, պէտք է միայն երկնքին նայել։

124

Լօռեցին հիւր էր եկել քաղաքի մի ընտանիքում։

Ճաշի ժամանակ երբ կրծած ոսկորն ուզում էր փակ լուսամտից դուրս շպրտել, տալիս է տպակին ջարդում, և զարմանալով բացականչում.

—Պրի՛, ձեզ մատաղ, հրէս-հրէս, լիսը սառցրել են։

125

Մարդու մէկը մոլլա Նասր-էդ-դինից էշ է խնդրում։

—Սպասիր, գնամ իշին հարցնեմ, եթէ ցանկանայ գալ, իսկոյն հետս կբերեմ։

Մոլլան գնում է ախոռը. մի քանի րոպէ այնտեղ մնալո ց յետոյ, վերադառնում և յայտնում.

—Էշս չի կամենում գալ,—ասում է՝ —եթէ ինձ նրանց ձեռքը յանձնես, ոչ

միայն ինձ չարաչար պիտի ծեծեն, այլ և կնոջդ մի լաւ պիտի հայհոյեն։

126

Մի ռուս հրացան է տալիս հայ վարպետին, որ մաքրի. սա պատուէրը չհասկանալով՝ հրացանը մէջտեղից կտրում, երկու ատրճանակ է շինում։

Ստանալիս ռուսը ապտիկ չարտնում է.

—Это что?!!

—Մէջէն կտրած էրկու փշտով,—պատասխանում է վարպետը։

—Зачѣмъ?!—աղաղակում է ռուսը կատաղած.

—Քեզ հով ա ասալ, թա էս զատ չըմ. պա քուռացալըս, տեսնում չ՞ըս, վէր եքիա ուստա ըմ ըստեղ նստած։

127

Յուլիսի տօթ օրերին մի լօռեցի էշն ու գոմէշը տանում ջրելու։ Նա չուանի մի ծայրը կապում գոմէշի վզից, միւսն իշին և ջուրն անում։

Գոմէշը շոգից նեղացած՝ փնչացնելով մտնում գետի խորքը՝ իրան հետ քաշ տալով և իշին, որը խեղդւում ու ջրի երեսին ոտները ձգած պտտում էր։

—Ա՛յ, ցաւս տանես դու, ասում է տէրն ափից՝ բունոթի քաշելով,—ոնց ա ջբով կշտացել ու արխային ոտները ձգել պառկէ՛ է։

128

Պըլը-Պուղին էշը նստած գնում է Նուխուայ կողմը ցորէն բերելու։ Հիւր է լինում մի մահտեսու տանը։ Պուղու էշը մահտեսու աչքին շատ դուր է գալիս և երբ Պուղին քնում է, մահտեսին երկաթները տաքացնում, իշի չորս ոտները դաղում, որ ինչ է միւս օրն էշը չկարողանայ շարժուիլ՝ մնայ իրան։ Մահտեսին այս գործողութիւնը կատարելուց յետոյ մինչև լուսանալը սաղմոս է կարդում և եկեղեցու զանգի ձայնը լսելուն պէս՝ Պուղուն ձայն է տալիս.—

—Եղբայր, վեր կաց, ժամ գնանք, աղօթք անենք։

Պուղին, որ վերմակի տակից ամեն բան դիտած էր, ասում է՝

--Մահտեսի՛, ոչ քո Երուսաղէմ գընալուդ ասեմ, ոչ իշի ոտները դաղդըղորելուդ, ոչ ճղճղալով սաղմոս կարդալուդ, ոչ ուրիշի քունը հարամ անելուդ՝ գլուխս ցաւցնելուդ և ոչ էլ ժամ գնալուդ ա-

սեմ։ Արածդ ընդունելի պաշտօն-պատարագ լինի։

Երբ մահտեսին տուն է դառնում, տեսնում է որ Պուղին իր ձին համեստել (փալանել)՝ ցորէն է բարձում։ Մահտեսին բոլորովին չի խօսում։ Պուղին իշի փոխարէն մահտեսու ձին է տանում։

129

Ռուսաց կայսր Մեծն Պետրոս մի անգամ բարկանում է իր զուարճախօս Բալակիրևի վրայ, մտածում է պատժել նրան։ Նամակ է գրում մի սպայի և տալիս զուարճախօսին՝ տանի սպային ու իր արժանի պատիժը ստանայ նրանից։

Զուարճախօսն իմանալով իր գլխի գալիքը, նամակը յանձնում է մի պալատականի, որ նա տանի սպային։ Կարդալով նամակը սպան, հէնց այն է՝ ուզում էր կայսեր հրամանը կատարել, վրայ է հասնում թագաւորի զուարճախօսը, յայտնում, որ կայսրը պալատականին ներումն է շնորհել։

Պալատականն ազատուելուց յետոյ պատիւ է համարում գնալ ընկնել թագաւորի ոտներն և շնորհակալութիւն յայտնել այդ շնորհի համար. այստեղ ար-

դէն բացւում է իր զուարճախօսի խորամանկութիւնը։

130

Գիշեր ժամանակ յոլովառատ անձրև էր գալիս. տանտէրը խնդրում է հիւրին՝ մնայ իրանց տանը, անձրևի տակ չընկնի։ Հիւրը համաձայնում է. քիչ յետոյ էլ սենեակում չէ երևում հիւրը, մի ժամից յետոյ յայտնւում է բոլորովին թրջուած։

—Ո՞ւր էիր, Գէորգ,—հարցնում է տանտէրը։

—Մեր տուն գնացի, որ կնոջս յայտնեմ՝ թէ անձրևի պատճառով ես չեմ կարող տուն գալ։

131

—Հեռաքրքրութիւնից ճաքում եմ, տիկին։

—Ի՞նչ բանի համար։

—Ձեր հարևան տիկին Աննայի մազերն անցած տարի սպիտակել էին, այս տարի ինչից է, որ սևացել են։

Ձեռ իմացել, որ ամուսինը մեռել է. . սուդի մէջ է։

132

Գիւղացին դիմում է գիւղի տանուտիրոջը.—

—Տանուտէր ապրած կենայ, մի դժբաղդութիւն է պատահել, ինչ դատաստան կանես։

—Ասա տեսնեմ, ինչ բան է, էլի ինչ է կատարուել։

—Իմ կովս քո կովին հարու է տուել և սատկացրել է... հիմա ինչ պիտի անել։

—Ո՛չինչ չպիտի արած, կվճարես ինձ կովիս գինն և սրանով էլ գործը կվերջանայ։

—Չէ՛, ես էդպէս չեմ ասում, տանուտէրը սաղ լինի, դու ինձ չհասկացար։

—Հապա ինչպէս ես ասում։

—Ես ասում եմ, թէ քո կովն է հարու տուել իմ կովին և սատկացրել... հիմա ինչ պիտի անել։

—Է՛հ, բարեկամ, ես էդ չգիտեմ։ Ես լաւ չեմ սովորեցրել իմ կովին, որ քո կովին հարու տայ։

133

Գիշերով գողը ներկարարի տունն է մտնում։ Իսկ սա բռնում է գողին, թաթախում ներկի կարասը, լաւ ներկում և դուրս հանում։

Ներկարարը հէնց այդ րոպէին ճանաչում է գողին.

—Օ՛, Դարչո, դու ես եղել, հա,

ներկի կարան երևում է միտդ է ընկել. ինչ ես կորցնում, դու էլ էիր խունացել, վրայիդ շորերդ էլ, հիմա թազացար, մաղարիչ վրէդ է Օրթաճալու բաղերում։

—Լաւ, Դարչո, հանաք մի կողմը թողնենք. էդ ո՞ր կուսակցութիւնն է քեզ ինձ մօտ ղրկել.

—Կոնծողների, ուստա Միխակ, միայն եաղլիշ եմ ընկել, ուրիշ տեղ պիտի մըտնէի, էստեղ եմ ընկել։

134

Մոլլա Նասր-էդ-դինը մի ինչ որ բանի համար յանդիմանում է իր թաղեցիներին։ Նրանք էլ որոշում են մոլլին ծեծել, գետը ձգել։ Մոլլան առաջուց դուշակելով գլխի գալիքը՝ տնից փախչում է. թաղեցիներն ընկնում են յետևից։

Գետի ափին մոլլան պատահում է մի հովուի։

—Ո՞ւր ես փախչում, հարցնում է հովիւը մոլլին։

—Ժողովուրդը թագաւոր է ընտրել ինձ, իսկ ես ծեր եմ, չեմ ուզում թագաւորել. հիմա յետևիցս ընկել են՝ որ համոզեն։

—Դրա համար էլ մարդ կփախչի՞, այ թէ ինձ ընտրէին։

—Եթէ ուզում ես, արի շորերս փոխենք, նրանք կզան քեզ կտանեն և թագաւոր կանեն, իսկ յետոյ երբ ճանաչեն, թէև կզղջան, բայց արդէն ուշ կլինի։

Հովիւը համաձայնում է. շորերը փոխում են. մոլլան հովուի շորերով՝ ոչխարներն առաջ արած քաղաքն է քշում, իսկ հովիւը մնում է նոյն տեղում։ Մոլլի թաղեցիները վրայ են վազում, հովուին բռնում, ջուրը նետում։

Միւս օրը մոլլան շուկայում ծախում էր հովուի ոչխարները։ Խեղդուած կարծողները մոլլին կենդանի տեսնելով, զերբնական էակ են ընդունում. նրանից յետոյ սկսում են աւելի յարգանք—պատիւ տալ մոլլին։

135

Զողազցի Ակոփ բիձէն մեռել էր լողացնում, քանի ուղղում էր մեռելի գլուխը, նա այս ու այն կողմն էր թեքւում։

—Տօ, գեօրբէգեօռ, էսպէս բռնի գլուխդ է, - ուղղեց վերջին անգամ գլուխն երկու ձեռով պինդ սղմելով Ակոփ բիձէն չարացած.— բա էնքան հոգի չի՞ մնացել վրէդ, որ մի քանի հրոպէ դինջ

պահես դլուխդ մինչև լողացնեմ. էս ինչ ախմախ մեռելի հանդիպեցինք էսօր, տօ։

136

Մեծն Պետրոսի զուարճախօս Բալակիրևը կարճ ժամանակ արձակուրդով գընում է իրանց տուն։ Նշանակած օրը չի վերադառնում և սիրտը վկայում էր, որ թագաւորն իր յետևից մարդ ուղարկելիս կլինի, ուստի՝ մի դաղաղ է պատրաստում, գնում սեղանի վրայ, մտնում մէջն և տանեցոց էլ պատուիրում, որ եթէ թագաւորի կողմից գալու լինին, ասեն լաց լինել և ասեն թէ երէկ մեռաւ։

Իսկ որ թագաւորից ուղարկուածը դալիս տեսնում է Բալակիրևին դագաղում պարկած, տանեցիք էլ սուգի մէջ, յետ գնում և տեսածը պատմում թագաւորին։

Զուարճախօսը վերադառնում է Զատկին և ուղղակի մտնում եկեղեցի պատարագի ժամանակ և չոքում կայսեր աթոռի առաջ։

Մի քիչ յետոյ կայսրն իջնում է եկեղեցի, տեսնում է Բալակիրևին, դեռ ոչինչ չի ասում։ Պատարագի վերջում զուարճախօսը մօտենում է թագաւորին, ներկած ձուն գրպանից հանում և աւե-

տում. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» — հայրդ այս հաւկիթը միւս աշխարհից ուղարկեց։

137

Պլը-Պուղին որսի ժամանակ վիրաւորուել էր մատակ արջից. բժշկները պատուիրում են որ լաւ խմիչքներ դրծածէ։

Մէլիք - Շահնազարն այցելութեան գալով հարցնում է.

Ա՛յ տղայ Պուղի, ինչպէս ես հիմա։

—Մէլիք, ողորմի էն արջի հօրը, երանի թէ շաբաթը մի անգամ արջն ինձ այսպէս քլոլէը, դու էլ ամեն օր ինձ այսպիսի շանպանիա, մադեր, պոյրդոյի գինի խմացնես։

138

Կաթուղիկոսը հարցնում է մի երեխայի.

—Հայրդ ի՞նչ է անում։

—Ձեզ է օրհնում, Վեհափառ Տէր, պատասխանում է երեխան։

— Տէրտէրի, վարդապետի, եպիսկոպոսի ես եմ օրհնում,—ասում է Վեհափառը,—քո հայրն ինչպէս կարող է ինձ օրհնել։

—Իմ հայրն Աստծուն էլ է օրհնում։

139

—Ինչու՞ ես լալիս, Պետրոս, ի՞նչ է պատահել քեզ, սիրելիս։

—Ճակատս պինդ կպցրի դռանը։

—Տեսնեմ, ե՞րբ, որտե՞ղ։

—Երէկ երեկոյեան։

Էլ ինչու՞ ես այսօր լաց լինում։

—Այնը երէկ տանը ոչ ոք չկար։

140

Աշակերտներն իրանց միջի ծոյլ ընկերոջը շարունակ նախատում էին.—

—Չե՞ս ամաչում, երեք տարի առաջին դասարանն ես նստել և չես փոխում։

—Ինչի՞ եմ ամաչում,—պատասխանում է ծոյլը,—ապա ուսուցիչս ի՞նչ պէսք է անի, երբ 30 տարի է, որ առաջին դասարանումն է։

141

Մէկ անգամ մի մոլլա խօսքով ասում է վիրաւորում է Նասր-էդ-դինին։ Վերջինս այսքրուանից էլ հանգիստ չի ունենում՝ 'դիշեր-ցերեկ մտածում է, թէ ինչպէս վրէժխնդիր լինի։

Կինը մարդուն հանգստացնում է.—ես նրա հախիցը կգամ, միայն դու գնա

մի մեծ արկղ բերը, ես էլ կերթամ նրան կհրապուրեմ, կբերեմ այստեղ. երբ ես դուռը փակեմ, դու քիչ յետոյ արի, դուռը բաղխիր, ես նրան կմոցնեմ այդ արկղը։ Յետոյ դու գիտես, ինչ ուզում ես արա։

Մոլլան հաւանում է կնոջ առաջարկութեանը, առնում է մի մեծ, սև արկղ, բերում տուն։ Կինն էլ գնում, անց ու դարձ անում մոլլի գնալով, նրան աչքունքով անում, դուրս հանում, բերում իրանց տունը։

Հազիւ էր նա սկսել իր սիրախօսութիւնը, երբ մոլլա Նասր-էդ-դինը դուռը բաղխում է։

—Վա՛յ, գոչում է կինը,—այս ի՞նչ կրակի մէջ ընկանք, ամուսինս է. կգայ երկսիս էլ այստեղ կսպանի. ի սէր Ալլահի, մտիր այս արկղը, պահուիր, մինչև խաբեմ, մի կողմի վրայ ցանեմ։

Սիրահար մոլլան ճարահատուած մտնում է արկղը. կինը բաց է անում դուռն և մոլլա Նասր-էդ-դինը կրակ դարձած յարձակւում է կնոջ վրայ՝ ի՞նչ էիր անում, որ այսքան ուշ բացիր, դուռը։

—Ոչինչ,—պատասխանում է կինը,—արկղս էի կարդի բերում, մինչև շորերս դասաւորեցի, ուշացայ։

—Դու քո խելքդ-միտքդ այդ արկ-

գին ես տուել, ամբողջ օրը նրա առաջն ես անցկացնում, պէտք է ես այդ տանեմ, կորցնեմ,—ասում է մոլլան,—շալակելով արկղը, տանում գետը ձգում։

142

Գիւղի կօշկակարը մի ճամբորդի թաքնելու համար դատապարտւում է կախաղանի։

Գիւղացիք հաւաքւում են դատաւորի մօտ և խնդրում որ ների։ Նրանք պատճառաբանում են.—գիւղում միայն այդ կօշկակարն է, եթէ նրան էլ խեղդէք՝ ամենքս կմնանք բոբիկ, առանց կօշկի։

—Հապա ի՞նչպէս կատարեմ օրէնքը, հարցնում է դատաւորը։

—Ա՜յ, հարևան գիւղում երկու կօշկակար կայ, նրանցից մէկին տարէք խեղդեցէք,—պատասխանում են գիւղացիք։

143

Դերձակը քթախոտի (բռնոթի) տուփը տալիս է աշակերտին, որ մօտիկ խանութից քթախոտ բերէ։

Աշակերտը հարցնում է.

—Իսկ փո՞ղը։

—Փողով հօ, ես էլ կբերեմ, բանն այն է, որ առանց փողի բերես։

Աշակերտը քթախոտի տուփով դուրս է գնում և մի քանի ըոպէից յետոյ վերադառնալով, դատարկ տուփը դնում է վարպետի առաջ։

Դերձակը հարցնում է.

—Ո՞ւր է քթախոտը։

—Էտա է,—պատասխանում է աշակերտը,—բանն էլ այն է, որ դատարկ ամանից քաշես, թէ չէ լիք ամանից ով ասես կքաշի։

144

Պըլը-Պուղուն փոքր ժամանակ ուսուցիչարան են տալիս կարդալու։ Ուսուցիչը շարունակ կրկնում էր՝ այը, այը, այը, բայց Պուղին չէր պատասխանում։

Ուսուցիչը հարցնում է պատճառը։

—Պարոն, վախենում եմ այբը որ սովորեմ, յետոյ ասես բենն էլ սովորի, գիմն էլ և վերջն՝ այս ամբողջ գիրքն էլ կարդայ։

145

—Պարոն, ի՞նչ է նշանակում բանակ, հարցնում է աշակերտը։

Ուսուցիչը մէկ ճակատն է շփում, մէկ ծոծրակը քորում և հազիւ լսելի ձայնով պատասխանում է.—

—Մեռնի գրաշարը, ի տառի տեղը՝ ը է գրել։ Փոխանակ դանակ գրելու՝ քանակ է գրել։

146

Մէկն իր ընկերոջից կարդալու գիրք է խնդրում։

Ընկերը մերժում է,—ներիր, ակզբունքով որոշել եմ որ ոչ մի մարդու գիրք չտամ։

—Ինչու։

—Որովհետև վերցնողը բոլորովին չի մտածում վերադարձնել, այ, քեզ օրինակ՝ տես, գրադատանիս այս բոլոր գրքերը տուել են ինձ կարդալու։

147

Քրդի մէկը հայի մօտ հովիւ է մնում։ Մէկ-երկու տարից յետոյ նա մի կճուճ մածուն խառած՝ գալիս է ոչխարի տիրոջը տեսնելու։

—Մեր ոչխարներն ինչ հալի են, հարցնում է տէրը։

—Հարիւր գլուխ ոչխարից 15-ը դեռում խեղդուեցին, 20-ը քարափից գլորուեցին—փշացան, 10-ը գողացան, 25-ը գայլերը կերան, մնացած 30-ը շատ լաւ են։

Տէրը զայրացած վերցնում է մածնի կճուճը և վրայ անում քրդի գլխին։

—Փառք քեզ Աստուած,—ասում է քուրդը,—որ տիրոջս առաջ ճերմակերես դուրս եկայ։

√ 48

Մոլլա Նասր-էդ-դինն եղն էր ծախում։ Գիւղացիները մտածում են օգտուել մոլլի բարեսրտութիւնից՝ եղը գնից էժան պոկել։

Ա՛յ մոլլա, ասում է նրանցից մէկը,—թէ Աստուածդ կսիրես, արի 1 մանէթ բաշխիր, շատ թանկ տուիր։

—Լաւ, 1 մանէթը քեզ բաշխեցի, պրծանք։

—Հոգիդ լսի բաժին լինի, մոլլա ջան, 2 մանէթ էլ ինձ բաշխի,—ասում է միւսը։

—Շատ լաւ, էդ էլ քեզ եմ բաշխում իմ հոգու խաթեր։

—Մոլլա ջան, խղճմտանքով մարդ ես երևում —ասում է երրորդը,—արի քո արևի սաղադէն 3 մանէթ էլ ինձ բաշխի։

—Աչքիս վրայ, 3 մանէթն էլ քո չարը տանի։

—Մոլլա, որ էդքան դրանց ես բաշ-

խում,—նկատում է չորրորդը,—էլ քեզ ինչ է մնում։

—Ինձ էլ իմ եղն,—ասում է մոլլան և եղը դէպի տուն քշում։

149

Եկեղեցու պատի վրայ նկարած էր Միքայէլ հրեշտակապետը սատանային սպանելիս։ Պառաւ կինը մի մոմ հրեշտակապետի առաջն է վառում, միւսը—սատանային։

—Ի՞նչ ես անում, մայրիկ,—աղաղակում է քահանան,—դու սատանային մատաղ ես բերում։

—Ես գիտեմ ինչ որ անում եմ,—պատասխանում է պառաւը,—ո՞վ գիտէ, ես որտեղ կընկնեմ, վնաս չունի, լաւ է ամեն տեղ ունենալ բարեկամներ։

150

Մեծն Պետրոսի գուարճախօս Բալակիրևը հրաւէրքում հանդիսականներին զբաղեցնում է. նա մօտենում է մի գերման քահանայի և հարցնում.—Տէր հայր, ճա՞ճ սպանելը մեղք չէ՞ արդեօք։

—Բոլորովին ո՛չ,—պատասխանում է նա,—ընդհակառակն՝ ես պ·տուի-

լում եմ՝ ինչ տեղ որ տեսնէք, խփէք, սպանէք։

Քիչ յետոյ ճանճ է նստում նոյն քահանայի ճակատի վրայ. Բալակիրևը տեսնելով ճանճին՝ մօտենում է՝ առանց մի խօսք ասելու, մի այնպիսի հարուած է հասցնում քահանայի ճակտին, որ ձայնը հարևան սենեակներում լսւում է։

V 151

Մէլիք Շահնազարը պատուական գինի էր խմում. Պլը-Պուղին մօտենում է.—

—Մէլիք, եթէ մի պուտ էլ ինձ խմացնես, խմացած կենաս, որ հայրդ արքայութիւն է գնալու։

Պուղին մի բաժակ գինի խմելուց յետոյ, ասում է.

—Մէլիք, քո հայրը ճամբայ ընկաւ։

Երկրորդ բաժակն է խմում։

—Մէլիք, մօտեցել է։

Երրորդն էլ է խմում։

—Այ տղայ, չհասաւ։

—Մէլիք, մի փոքր տեղ է մնացել, հասնելու վրայ է։

Մի բաժակ էլ խմելով, ասում է.—

—Մէլիք, հայրդ արքայութեան ու գժոխքի մէջ տեղը կանգ է առել։

Վերջին բաժակն էլ խմելով, կանչում է.—

—Ը՞հը։

—Ա՛յ տղայ, հայրս արքայությունը գնաց, թէ դժոխքը։

—Մէլիք, մի թրմփոց եղաւ, չգիտեմ՝ արքայություն ընկաւ, թէ դժոխքը։

152

Վիճակ էին ձգում երկու գիւղացու, թէ նրանցից որը պիտի լինի միլիցիայի գինուոր։ Քաղաքագլուխը, որին խնդրել էին փոքրին ազատել, հեռուեալ խարդաւանքն է մտածում.—նա երկու սև տոմսակ է դնում ամանի մէջ և մօտիկ կանչում գիւղացիներին. «երկսիցդ ով հանէ սևը, նա կլինի գին որ։ Սկսի՛ր, դու հանել՝ դառնալով մեծին»։

Սա առաջուց հասկացել էր քաղաքագլխի խարդաւանքը, հանում է մի տոմսակ և խլոյն կուլ տալիս։

—Ի՞նչ ես անում յիմար, աղաղակում է քաղաքագլուխը։

—Պարոն, եթէ իմ կուլ տուածը սև է, - պատասխանում է գինուորացուն,—միւսը սպիտակ պիտի լինի, ուրեմն՝ ես գինուոր կլինիմ. իսկ եթէ իմ կուլ տուածը

սպիտակ է, միւսը սև պէտք է լինի, ուրեմն՝ ընկերս կգնայ։

Այս պատասխանով երկուսն էլ ազատւում են։

153

Սեքարեցի տանուտէր Օհանը 4 գրրուանքայ միս է առնում, կնոջը տալիս, որ իրիկուայ համար քուֆթա եփի։ Կինը պատրաստած կերակուրը սիրեկանի հետ ուտում է։

Երեկոյեան Օհանը վերադառնում է տուն, սաստիկ քաղցած, մեծ ախորժակ ունէր քուֆթա ուտելու։

—Ա՛յ կնիկ, շուտ արա, քուֆթան բեր։

—Հողս գլխիդ,—գոռում է կինը,—քանի անգամ ասել եմ քեզ, որ պէտք է հեռացնել այս գող կատուին, իսկ դու երբէք ուշադրութիւն չէիր դարձնում, հիմի լաւ եղաւ, լոլոր միսը փախցրել, կերել է։

Օհանը բայի սոլածութիւնից բարկացած էլ էր, տեղից վեր է թռնում, բռնում կատուին, կշռում և տեսնում որ կատուն 4 գրրուանքից դեռ թեթև կշռեց։

—Անամօթ կին,—գոչում է Օհանը,—ինչպէս ես մեղադրում անմեղ կատուին,

ելը դեռ կատուն քո աչքի առաջ 4 դըրուանքից թեթև կշռեց. իսկ եթէ իսկապէս միայն կերած լինէր, այն ժամանակ գոնէ 4 դրուանքից մի քիչ աւել պիտի կշռէր։

154

Մոլլա Նասը-էդ-դինին մէկը հարցնում է, թէ՝ աչքի ցաւի դեղ չգիտէ։

—Ինչպէս չէ,—պատասխանում է մոլլան, սև կուպրը (ձիւթ) նշանաւոր դեղ է։

Մարդն ուրախ-ուրախ տուն է գընում, վերցնում է մի կտոր կուպրը, հալում և լցնում աչքին։ Լցնելուն պէս՝ իսկոյն կուրանում է. կատաղած-փրփրած վազում է մոլլի մօտ։

—Ա՛յ մոլլա, Ասուած լուսդ խաւարացնէ, ինչպէս որ դու իմ լուսս խաւարացրիր. էս ինչ տեսակ դեղ էր, որ տվորեցրիր։

—Ես ինչով եմ մեղաւոր,—արդարանում է մոլլան,—ողջ աշխարհն էլ գիտէ, որ կուպրը դեղ է. ես ինչ անեմ, որ մի ցաւին օգնում է, միւսին ջնասում է։

155

Ինչու չես դէն ածում այս աղբը, բարկանում է տէրը ծառայի վրայ։

—Այլ չկայ, աղա։

—Ցիմար, բակում փոս փորիր, լցրու մէջը։

—Իսկ դուրս հանած հողն ուր տանեմ։

—Ցիմար, մի քիչ փոսը խոր փորիր, լցրու այնտեղ աղբն էլ, հողն էլ։

156

Ռուսաստանը Բագուին երբ տիրանում է, Պարսկաստանի հետ հաշտութեան պայման կապելիս՝ առաջարկում է Կասպից ծովն էլ իրան համարուի։

Սրա մասին յայտնում են Պարսից շահին։

—Այդ ծովի ջուրը քաղցր է, խմելու պէտք է, թէ ոչ։

—Քաղցր չէ, դառն է, պատասխանում են շահին։

—Եթէ դառն է, էլ ինչերիս է պէտք, յանձնեցէք Ռուսաստանին, հրամայում է շահը։

157

Մի հայ գնացել էր Ռուսիա. այնտեղ երկար ժամանակ ապրում է, վերջը հայրենիքն է վերադառնում։

Ծանօթներից մէկն ողջունում է.—

բարով Սարգիս ախպէր, բարով, հազար բարով ես եկել։

Սարգիսը ոչինչ չէ պատասխանում։

—Տօ, քեզ հետ չՀՆ, հարցնում է ծանօթը նեղացած։

—Ախ, ներեցէք, իմ անունն այժմ Սերգէյ Գրիգորևիչ է։

158

Մի պարսիկ շահզադէ հարցնում է.

—Պուղի, հայերն ինչի՞ ուղտի միսը չեն ուտում։

—Շահզադա, թուրքերն ինչի՞ խոզի միսը չեն ուտում։

—Ուղտը Հաճ, Մէկկա, Մաշատ է գնում, այդ պատճառով նրա միսը սուրբ է ուտելու համար. խոզը ոչ մի տեղ չի գնում, ուրեմն՝ միսը պիղծ է։

—Շահզադա, այդ տեղերը ձիանք, ջորիներ և էշերն էլ են գնում, ապա ինչու՞ սուրբ չեն և երկրորդ՝ շահզադա, խոզին եթէ թողնելու լինիս, ոչ թէ Մէկկա, այլ մինչև Ամերիկա կերթայ և կգայ։ Ուրեմն՝ խոզն աւելի սուրբ է ուտելու, քան ուղտը։

159

Փիլիպը շատ տգեղ մարդ էր։ Մէկ

անգամ փողոցում պատահում է մի նկարչի, որն իր առանձնասենեակն է հրաւիրում և դէմքի ընդհանուր գծերը նշանակելուց յետոյ՝ շատ շնորհակալ է լինում։

—Ասացէք խնդրեմ,—հարցնում է Փիլիպը զարմացած,—այդ ինչ պատիւ էր, որ ինձ արիք։

—Նկեղեցու համար սատանայի պատկեր էին պատուիրել,—պատասխանում է նկարիչը,—երկար ժամանակ որոնելուց յետոյ ձեզ գտայ ամենայարմար օրինակը, ուրիշ ոչինչ, վատ բան չկարծէք, խնդրեմ։

160

Հարսանիքում փեսայի հայրը պար էր գալիս, տեսնում է որ հարսի հայրն էլ է պար գալիս, հարցնում է. «ինչամի, ես որ պար եմ գալիս, ինձ սազում է, որովհետև իմ որդիս երկու դարձաւ. հարցնող ըլի, դու ինչի՞ ես պար գալիս։

—Ես էլ ընդուր եմ պար գալիս,—պատասխանում է հարսի հայրը,—որ իմ վզից օձը հանեցի ու քո վիզը փաթաթեցի։

161

Մի խեղճ պառաւ կին ամեն Աստծու

օր ամանով ջուր էր տանում քահանայի մօտ և խնդրում, որ օրհնէ, որովհետև՝ ասում էր, կատուի դունչը դիպել է ջրին։ Քահանան ձանձրանալով՝ յայտնում է պառաւին. «Օրհնուած, ինչ ես այսչափ անհանգստացնում ինձ, դնա, կատուին այստեղ բեր, օրհնեմ նրա դունչը, դու էլ կազատուես, ես էլ»։

162

Մէկ անգամ մոլլա Նասր-էդ-դինը թարս ձի նստած՝ երեսը պոչի կողմը դարձրած՝ գնում էր։

Ճանապարհին ամենքը բղաւում են նրա յետևից.—

—Է՛յ, մոլլա, մոլլա, էդպէս չեն նստիլ ձի։

—Զարմանալի մարդիկ էք դուք,— պատասխանում է մոլլան.—դուք ինչ գիտէք, թէ ես որ կողմն եմ գնում՝ արեւելք թէ արևմուտք։

163

Նորշէնցի Գիքին (Գրիգոր) սարումը մեռնում է. նրա մարմինը գոմէշի վրայ պինդ-պինդ կապում, յանձնում են Թիւնի (Ցարուբիւն) ապօրը, որ հասցնէ գիւղը, այնտեղ թաղելու համար։

Ճանապարհին գետն անցնելիս, գոմէշն ուզում է ջրում նստել—հովանալ. Թիւնին որքան հօ, հօ անում, հնար չէ լինում, գոմէշը չոգում է։ Յետոյ Թիւնին սկսում է բղաւել՝ ա՛ Գիքի, ա՛ Գիքի (մեռածին), մին հօ, հօ էլ տիւ արա, կիւմաշը չնստի գետումը։

Թիւնին տեսնում է որ մեռելից ձայն չի դուրս գալիս, գոմէշն էլ նստեց, նեղացած սրտով չարանում է. ա՛ Գիքի, ընտի մեռալիս (այն տեսակ ես մեռել), որ մի հօ, հօ էլա կարում չիս ասել։

164

Կինոն ձկնով լիք թաբախն առջևը դրած՝ կանչում էր.

— Ցոցխալը, աբա լաւ ցոցխալը...

Մօտենում է մի կին, տեսնում, որ թաբախում ձկները չեն շարժւում, սառկած են։

—Էս, խօմ, միրա՛ծ է։

—Չէ, դէդի ջան, նուր քնից։

Կինը ձեռն առնում մի հատ, քթին մօտեցնում՝ տեսնում է որ, հոտած էլ են։

—Փիւֆ, ասում է զզուանքով.

—Էս խօմ հուտած էլ է։

—Չէ, դէդի ջան,—վրայ է բերում կինոն,—նուր դուս գնաց...

165

Պըլը-Պուղին մէկ անգամ էշն առաջն արած գիւղն էր գառնում։ Ճանապարհին մի ծանօթ Պուղուն խնդրում է, որ գիւղի տանուտէրոջը յայտնի շուտով իրան մօտ գայ՝ մի շատ հարկաւոր և շտապողական գործի համար։

—Եթէ այդքան շտապով է,—պատասխանում է Պուղին,—իշխս յանձնարարիր, նա իմ առջևից է գնում և ինձնից առաջ կլինի գիւղում։

Պըլը-Պուղին գիւղը հասնելով՝ շտապում է մէլիքի մօտ և տեսնում որ Մէլիք-Շահնազարը կնիքով զանազան պաշտօնական թղթեր է հաստատում. Պուղին դիմում է մէլիքին՝ լրջօրէն խնդրելով.—

—Մէլիք, մէլիք, քո հոգուն մատաղ, խնդրում եմ մի կնիք էլ էս իմ Շակտին խլի, որ ուրիշ մարդու հետ փոխս չընկնեմ, չունքի մէկ օր գնացի տանձ քաղեցի, չգիտեմ ճանապարհին, թէ տանը տանձը շլոր էր դառել։

166

Ղալաչա գիւղում մեռնում է մի ծերունի։ Մեռնողի որդին քահանային փող է տալիս, որ հօր հոգուն պատարագ անէ։

—Քո հայրը,—ասում է քահանան,—շատ մեծ էր և մեղաւոր մարդ էր, պէտք է շատ փող տաս, որ նա դրախտ գնայ։

—Ո՞րքան պէտք է տալ։

—Ամենաքիչը 30 ռուբլի։

—Շատ լաւ, ես այդքան փող չունիմ, մի լաւ եզն կտամ, կարելի՞ է։

—Կարելի է, պատասխանում է քահանան ուրախացած։

Անցնում է բաւական ժամանակ։ Մի օր գիւղացին կրկին պատահում է նոյն քահանային։ Սովորական խօսակցութիւնից յետոյ, գիւղացին հարցնում է.

—Տէր հայր, կատարեցի՞ր իմ խնդիրը։

—Այո՛, որդի, ինչպէս չէ։

—Եւ այժմ հայրս ազատուած է։

Այո՛, այժմ նա դրախտի մէջտեղը նստած է։

Եւ բաժանւում են նրանք իրարից։

Հէնց նոյն երեկոյին գիւղացին գնում է նախիր, տէրտէրին տուած եզն առջևն է անում և բերում իր տունը։

—Ի՞նչ ես անում, հարցնում է տէրտէրը զայրացած։

—Տէր հայր, դու ասացիր, որ իմ հայրն արդէն ազատուած է և արքայութեան մէջ է։ Ես լաւ գիտեմ իմ հօր խասիաթը, նա այնքան պնդերես մարդ է,

որ նրան այսուհետև ոչ ոք չէ կարող դուրս ձգել. իսկ եղն ինձ պէտք է վարուցանքի և ընտանիքս կառավարելու համար։

167

Մարդու մէկը բեռնել էր ձին, ինքն էլ վրան նստել։ Մի քիչ գնալուց յետոյ, մտածում է՝ մեղք է ձիս, բեռը մի փոքր թեթևացնեմ։

Ցետ է անում բեռն, մի մասը շալակում է և կրկին հեծնում ձին։

168

Մոլլա Նասր-էդ-դինին հարցնում են քանի տարեկան ես։

—Ես ինչ գիտեմ, շատ կարելի է 40 լինիմ, կամ 50։

—Էդ ինչպէս բան է, դու մոլլա մարդ, կարդացող, քո տարիքդ չՀես իմանում։

—Էդ ինչ մի շատ հարկաւոր բան է, որ իմանամ. էդ էլ խոշ, հաւ, ոչխար, կով, գոմէշ չէ, որ եթէ հաշիւը չպահենք՝ կորչի-գողանան, չիմանանք։

169

Մի կին իր ընկերուհուն այցելութեան

է գնում. նա տանը չէ լինում։ Այցելուն նկատում է որ ընկերուհու կահ-կարասիքը շատ փոշոտ են և կամենալով նրան ամաչացնել, կարմրացնել, մատով սեղանի և միւս իրեղէնների վրայ խոզ է գրում և դուրս գալիս։

Միւս օրը կրկին այցելում է. ընկերուհին տանն է լինում։

—Երէկ ես եկայ, իսկ քեզ տանը չգտայ, ասում է եկուոը կինը։

—Հա, շնորհակալ եմ, այցետուր թողել էիր։

170

Մի պարոն խիստ քաղցած էր, իսկ գրպանում կոպէկ չունէր. նա մտնում է մի ճաշարան, կերակրների ցուցակը պահանջում և սկսում ծայր է ծայր կարդալ։

—Այստեղ հաց չկայ գրած,— ասում է նա սպասաւորին։

—Հացն անփող է, պարոն.

—Ուրեմն՝ միայն հաց բերէք։

171

—Ինչի գլուխդ օղիով լուանում ես։

—Ասում են շատ մաղ դուրս կգայ։

—Զհաւատաս, եթէ ուղիղ լինէր, կոկորդիս մէջ շատ օղի խմելուց մինչև

հիմա մարերի մի մեծ փունջ դուրս եկած պիտի լինէր։

172

Պարսկաստանցի մի շահզադէ Պլը-Պուղուն հարցնում է.

—Պուղի, հայերն ինչի՞ մեր Մահմեդին մարգարէ չեն ընդունում, իսկ Քրիստոսին Աստուած են դաւանում։

—Այն պատճառով, որ ձեր մարգարէն իր հաւատը սրով, թրով և հոնի մահակով է տարածել, իսկ Քրիստոս խոնարհաբար քարոզելով, առանց մարդկանց խղճի ազատութիւնը բռնաբարելու։

Մէկ էլ որ, ձեր մարգարէն, լսի՞ր, թէ ինչ է վկայել Քրիստոսի աստուածութեան մասին, ահա նրա խօսքերը՝—«Քրիստոս արդէն յարութիւն է առել եւ երկինք է համբարձել»։ Ապա ուրեմն՝ մնում է ինձ ասել, որ ձեր մարգարէն մարդ էր միայն, մեռնելուց յետոյ թաղուած է Մէկկայում և իբրև մարդ Քրիստոսի դատաստանի տակն է։ Տեսնենք՝ եթէ դատաստանի օրը ձեր մարգարէն արդարանայ; այն ժամանակ հայերն էլ, բոլոր քրիստոնեաներն էլ կընդունեն իբրև Մարգարէ, բայց ոչ-ոչ կարդարանայ։

173

Մէկ աղքատ հրէայ ծանր հիւանդանում է։ Նա ունենում է մի կով և մէկ այծ։ Հիւանդն ապաւինում է Աստծուն, որ ազատի իրան մահից՝ խոստանալով առողջանալուն պէս՝ ծախել միակ կովը և այդ փողն Աստծու անունով աղքատներին բաժանել։ Աստուած ընդունում է հիւանդի ուխտը՝ և առողջանում է։ Մնում էր որ իր խոստումը կատարէր։

Հնարագէտ հրէան ծախու է հանում կովը էլ, այծն էլ։

Առնողները հարցնում են—քանի՞ ես ասում։

—Կովն 3 մանէթ, իսկ այծը 40։

—Ի՞նչ ես խօսում, այ մարդ, սխալւում ես, երևի ուզում ես ասել կովը 40 մանէթ, իսկ այծն 3 մանէթ։

—Չէ՛, ես չեմ սխալւում, ապրանքն ինն է, այսպէս եմ գնահատում։

—Երբ այդպէս է, ստացիր 3 մանէթ, ես կովն եմ ուզում։

—Չէ՛, ջոկ-ջոկ չեն ծախուի։

Կովն ուզողը ստիպւում է այծն էլ առնել՝ վճարելով երկսին 43 մանէթ։

Փողապաշտ հրէան տուն է գալիս, չոգում Աստծու առաջ՝ աղօթում. «Տէր

Աստուած, ուխտս կատարում եմ. ընդունիր այս 3 ռուբլի աղքատիկ լուման, որ քո մեծ անունով նուիրում եմ խեղճերին»։ Այսպէս աղօթելով՝ կովի 3 ռուբլին բաժանում էր աղքատներին։

174

Մոլլա Նասր-էդ-դինն էշը կորցնելով՝ հարցնում է մի անցորդի՝ ճամբին աբդեօք էշ չե՞ս տեսել։

—Էշդ դատաւոր է եղել, տեսայ այս ինչ տեղը, – պատասխանում է անցորդը։

—Ճիշտ է,—աւելացնում է մոլլան, — գիտէի որ դատաւոր պիտի լինէր, որովհետև երբ նրան դաս էի տալիս, ականջները ցցում էր, որ ուշադրութեամբ լսէ։

175

Քահանան եկեղեցում քարոզում էր. յանկարծ ամպը տրաքում է։ Քահանան վախից անգիր արած քարոզի շարունակութիւնը մոռանում է, սակայն չի շփոթւում. իր տգիտութիւնը ծածկելու համար, ծալում է առջևը դրած Աստուածաշունչը ս. գիրքն և ասում.—«Երբ Աստուած խօսում է, մարդը պէտք է լռէ և լսէ». «Հայր մերով» ժամասացութիւնը աւարտում է։

176

Փաշի որդին մէկ օր հայ քահանային ծաղրում է. քահանան նրան յանդիմանում է.—«Ցիմար մի՛ լինիր հօրդ պէս, խելացի եղիր»։

Փաշան քահանայից բացատրութիւն է պահանջում։

Քահանան հասկացնում է փաշային, թէ որդուդ լաւ խրատ տուի, նրան ասացի. «Ցիմար մի՛ լինիր, հօրդ պէս խելացի եղիր»։

Քահանան դեռ պարգևատրւում է։

177

Պարսիկ խանը Պլը-Պուղուն հարցնում է.

—Պուղի, դու որ այսչափ խելօք ես, ապա մարդիկ ինչ պատճառով են քեզ խենթ կանչում։

—Ծան, մարդիկ նրա համար են իմ անունը խենթ դրել, որ ես նրանց խենթ չկանչեմ։

178

Մեծն Պետրոս մէկ օր նկատում է իր զուարճախօս Բալակիրևին.

—Շատ ես քնում դու, յիմար, ա-ռողջութեանդ վնաս է։

—Ընդհակառակն օգտակար է։

— Ինչպէս։

—Նրա համար, երբ չեմ քնում, ես մարդկանց մէջ եմ ման գալիս, կարող եմ մեղքեր գործել, իսկ քնիս մէջ ոչ ոքի չեմ վնասում։

179

Մոլլա Նասր-էդ-դինը թաւ էր ածում և շարունակ միևնոյն տեղն էր բռնած։ Ինը հարցնում է՝ ուրիշները ածելիս, ձեռն վեր ու վար են տանում, ինչպէս է որ դու շարունակ միևնոյն տեղն ես բռնում։

—Ուրիշները տեղը չեն գտնում՝ որոնում են, իսկ ես իսկոյն գտնում եմ։

180

Խմած մարդն ուշ ժամանակ տուն գալով, նայում է կնոջ երեսին, կինն երկու հատ է երևում նրա աչքին։

—Տէր Աստուած, — ասում է նա, — ես մի կին չէի կարող պահել, հիմա ինձ երկուսը տուիր։

181

Պլը-Պուպու կինը, որդիքը, հարա-

ները—ամենքը մեռել էին։ Պուդլին տուն-տեղը ծախել, փողը վերցրել գլուխ առել գիւղից հեռանում էր։

Ճանապարհին հանդիպողները հարցնում են.

—Պուդլի, այդ ի՞նչ է շալակիդ։

—Տունս, տեղս, կարողութիւնս ս

182

Տաք մուշտակում փաթաթուած փաթաթամ հարուստը ձմեռուայ սառնամանիքին տեսնելով բոլորովին մերկ մի խեղճ մարդու աշխատելիս, հարցնում է՝

—Մի՞թէ դու չես մրսում։

—Առաջ դուք պատասխանեցէք.— իսկ ձեր երեսը չի՞ մրսում արդեօք,— հարցնում է խեղճ մարդը։

—Չէ՛, իմ երեսը միշտ բաց է, դէ՛ համար էլ սովորել եմ, չի՛ մրսում,—պատասխանում է հարուստը։

—Դէ՛, ես էլ խօ՛, ամբողջ մարմնով մերկ եմ,—պատասխանում է մերկը,— սրանից էլ իմացէք ամեն բանը։

(In)

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0041042

I
6208

ՎԱՃԱՌԱԿՈՒ

1. Եպիսկոպոս . . . . . [illegible]
2. Ծննդեան բնծայ (1 պատկեր)
3. Ծիծաղաբեր ԸՆՏԻՐ գուսան

ՊԱՏՐԱՍՏ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ
Հայոց Հայրիկ (Մկրտիչ Ա. Կաթուղիկոս)

ԳԻՆՆ Է 20 ԿՊԿ.

Ինձնից գումարով պահանջողներին 20% զեղչ և ճանապարհածախսն իմ հաշուին։

Ծանկացողները կարող են դիմել՝ Тифлисъ. Хачатуру Хачатріанъ. 9 уч. Лисссгорскій пер., № 10.

կամ

Թիֆլիզ՝ Գուտենբերգյան, Կենդրոնական, Զար. Տիդրանի, Ն. Մարտինեանի և Թառայեանի գրավաճառներին։